# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

«01 հոկտեմբերի» 2025թ. ՆՄՈ/871-Ա

*ք. Արմավիր*

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 14-Ի N 116 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով և հիմք ընդունելով Արման Խաչատրյանի դիմումը

**Ո ր ո շ ու մ ե մ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2006 թվականի օգոստոսի 14-ի «Սարիբեկ Խաչատրյանին, Գոհար Խաչատրյանին, Էմմիլա Սարիբեկի Խաչատրյանին և Արման Սարիբեկի Խաչատրյանին անհատական բնակարանային ֆոնդի բնակարանի անհատույց մասնավորեցման մասին» N 116 որոշման
   1) վերնագրում «ԷՄՄԻԼԱ» բառը փոխարինել «ԷՍՄԻԼԱ» բառով:
   2) 1-ին կետում «Էմմիլա» բառը փոխարինել «Էսմիլա» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏ՝** Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 **ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

<<01>> հոկտեմբերի 2025թ. N ՄՊ/872-Ա

ք. Արմավիր

### ՌՈՒԶԱՆՆԱ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ «ԾԻԱԾԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով, 12-րդ հոդվածի 18-րդ մասով, 30-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի N 259-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 11-րդ կետով, հիմք ընդունելով Ռուզաննա Գաբրիելյանի 2025 թվականի սեպտեմբերի 26-ի դիմումը.

**ո ր ո շ ու մ  ե մ՝**

1. Ռուզաննա Գաբրիելյանին նշանակել «Ծիածանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնում՝ 2025 թվականի հոկտեմբերի 1-ից կնքելով նրա հետ աշխատանքային պայմանագիր՝ հինգ տարի ժամկետով, համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏ՝** Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Արմավիր «01» հոկտեմբերի 2025թ.

Սույն պայմանագրի շրջանակներում կողմերն ընդունում են հասկացությունների հետևյալ սահմանումները՝

**Գործատու՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմ:**

**Կազմակերպություն՝** «Ծիածանի միջնակարգ դպրոց» **պետական ոչ առևտրային կազմակերպություն՝** գրանցված ՊՌ Վաղարշապատի ՏԲ, գրանցման N 99.210.01374, վկայական N 03 Ա 058683:

**Համակարգող՝** կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնում ընտրված (նշանակված) անձ՝ **Ռուզաննա Նոդարի Գաբրիելյան** (ծնված՝ 16.02.1973թ., հասցեն՝ Վաղարշապատ, Անդրանիկի 4 թղմ., 62 տուն, անձնագիր՝ AU0610666, տրված՝ 08.02.2022թ., 057-ի կողմից):

**Պայմանագիր՝** սույն պայմանագիրը:

Գործատուն, ի դեմս **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Վահրամ Աշոտի Խաչատրյանի**՝ մի կողմից, և **վարչատնտեսական մասի համակարգող Ռուզաննա Նոդարի Գաբրիելյանը՝ մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.**

## 1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով գործատուն կազմակերպության վարչատնտեսական գործընթացի կառավարումը և վարչատնտեսական գործունեության ղեկավարումը հանձնում է համակարգողին, իսկ համակարգողը, իր իրավունքներն իրականացնելիս և պարտականությունները կատարելիս, պարտավորվում է պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը, լինել բարեխիղճ և ողջամիտ, գործառույթներն իրականացնել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական և աշխատանքային օրենսգրքերին, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Կրթության մասին», «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներին, կազմակերպության կանոնադրությանը, այլ իրավական ակտերին և սույն պայմանագրին համապատասխան՝ ի շահ կազմակերպության:

## 2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1.Կողմերի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, կազմակերպության կանոնադրությամբ և պայմանագրով:

2.1.1.Համակարգողը.

1) ղեկավարում է կազմակերպության տնտեսական, ֆինանսական գործունեությունը

2) սահմանված կարգով ներկայացնում է հաշվետվությունները, լիազոր մարմնին ներկայացնում է նաև կազմակերպության բյուջեի նախագիծը, բյուջետային ֆինանսավորման մասին հայտը և հաջորդ տարվա ծախսերի նախահաշիվը՝ դրանում ներկայացնելով մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները, արտաքին և ներքին գնահատման արդյունքների վերաբերյալ տեղեկանքը.

3) տնօրենի հետ իրականացնում է ուսումնական գործընթացի պլանավորում, անհրաժեշտ պայմանների ապահովում

4) հաստատում է կրթության կառավարման տեղեկատվական համակարգում ձևավորված տարիֆիկացիան.

5) կրթության կառավարման տեղեկատվական համակարգում ձևավորում և հաստատում է վարչատնտեսական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ հաստիքների անվանացանկը.

6) գնահատում է տնօրենի տրամադրած՝ ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման նպատակով անհրաժեշտ կարիքների համար պահանջվող ծախսերը, կազմում է նախահաշիվը և ներկայացնում է լիազոր մարմին.

7) ապահովում է գնումների գործընթացի կազմակերպման և իրականացման աշխատանքները.

8) համաձայն պաշտոնների անվանացանկի և պաշտոնի նկարագրի՝ անցկացնում է վարչատնտեսական աշխատակիցների թափուր տեղի համար մրցույթը, կնքում և լուծում է աշխատանքային պայմանագրերը.

9) ապահովում է արտադասարանական խմբակների և ուսումնական լաբորատորիաների, մասնագիտական կողմնորոշման կենտրոնների բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմանները.

10) ապահովում է անհրաժեշտ պայմաններ՝ ուսումնական պլանին համապատասխան կրթական ծրագրերի իրականացման, կրթական գործընթացի կազմակերպման համար.

11) ապահովում է բյուջետային հատկացումների, հիմնադրի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից օրենքով սահմանված կարգով ստացված միջոցների արդյունավետ օգտագործումը, ուսումնանյութական բազայի հաշվառումը, պահպանումը, համալրումը.

12) ապահովում է հաշվապահական հաշվառման իրականացումը և օրենքով սահմանված կարգով ներկայացնում հաշվապահական հաշվետվություններ.

13) օրենքով իրեն վերապահված գործառույթների շրջանակներում ներկայացնում է կազմակերպությանը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններում և այլ կազմակերպություններում, բացում է հաշվարկային և գանձապետական հաշիվներ, իր իրավասության սահմաններում տալիս է լիազորագրեր.

14) ապահովում է կազմակերպությունում գործածության ենթակա վարչատնտեսական փաստաթղթերի շրջանառությունը, վարումը և պահպանումը.

15) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

16) օրենքով և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

17) խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է կազմակերպության խորհրդի նիստերին, ինչպես նաև խորհրդին ներկայացնում ամենամյա հաշվետվություն՝ սահմանված գործառույթների կատարման մասին.

18) աջակցում է կազմակերպության խորհրդակցական մարմինների աշխատանքներին.

19) ապահովում է լիազորված մարմնի՝ օրենսդրությանը չհակասող հանձնարարականների կատարումը.

20) իր պաշտոնի նկարագրին համապատասխան՝ մասնակցում է վերապատրաստումների Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգի և ժամանակացույցի համաձայն.

21) օրենքով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն վերահսկողություն իրականացնող մարմինների արձանագրած՝ օրենսդրությամբ և կազմակերպության կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթների, օրենքների, հիմնադրի, մարզպետի աշխատակազմի, խորհրդի որոշումների և կնքված պայմանագրերի պահանջների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, այդ թվում՝ անվտանգության տեխնիկայի ապահովման, վարչատնտեսական աշխատողների իրավունքների և ազատությունների պաշտպանության, ինչպես նաև սովորողների և աշխատակիցների կյանքի և առողջության պահպանման և ուսումնական հաստատության՝ օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ սանիտարահիգիենիկ պայմանների ապահովման համար.

22) յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի հաստատումից հետո մեկ ամսվա ընթացքում համակարգողն օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության նախահաշվի նախագիծը ներկայացնում է տնօրենին: Տնօրենը ծանոթանում է ներկայացված նախագծին և նախագծի վերաբերյալ առաջարկություններ ունենալու դեպքում՝ դրանք ներկայացնում համակարգողին: Համակարգողը, ներկայացված առաջարկները քննարկելով տնօրենի հետ, ըստ անհրաժեշտության, նախահաշվի լրամշակված նախագիծը ներկայացնում է լիազորված մարմնին.

23) համակարգողի բացակայության դեպքում՝ օրենքով և կազմակերպության կանոնադրությամբ, համակարգողին վերապահված գործառույթներն իրականացնում է կազմակերպության տնօրենը.

24) իրականացնում է օրենսդրությամբ և կազմակերպության կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

**2.1.2. Համակարգողը իրավունք չունի.**

1) լինել երրորդ անձանց ներկայացուցիչն այն մարմնի հետ կապված հարաբերություններում, որտեղ ինքը գտնվում է ծառայության մեջ, կամ որն անմիջականորեն ենթակա է իրեն կամ անմիջականորեն վերահսկելի է իր կողմից.

2) ծառայողական պարտականությունների համար այլ անձանցից ստանալ նվերներ, գումարներ կամ ծառայություններ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

**2.1.3. Համակարգողը պարտավոր է.**

1) իր պարտականությունները կատարել պատշաճ, սահմանված կարգով և ժամկետներում.

2) ենթարկվել կազմակերպության ներքին կարգապահական կանոններին, աշխատավայրում իր աշխատանքը կանոնակարգող այլ իրավական ակտերի պահանջներին.

3) կատարել լիազորված պետական մարմնի հանձնարարությունները.

4) չկատարել հիմնադրի և լիազորված պետական մարմնի, կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմինների՝ օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանք չկատարելու համար չի կարող ենթարկվել պատասխանատվության.

5) ինչպես կազմակերպությունում իր աշխատանքային գործունեության ընթացքում, այնպես էլ դրանից հետո չհրապարակել պետական կամ ծառայողական գաղտնիք հանդիսացող տեղեկությունները.

6) գործատուի պահանջով նրան ներկայացնել հաշվետվություն՝ իր կողմից կատարվող աշխատանքների և հետագա ծրագրերի մասին.

7) անմիջականորեն կատարել աշխատանքում տեղ գտած թերությունները վերացնելու լիազորված պետական մարմնի պահանջները.

8) գործատուին անմիջապես տեղեկացնել իր կողմից իր պարտականությունների կատարման անհնարինության մասին, եթե գտնում է, որ ինքը չի կարող իրականացնել կազմակերպության արդյունավետ ղեկավարումը.

9) տարեկան առնվազն մեկ անգամ կատարել գույքագրում՝ հաշվառելով կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող և ամրացված գույքը.

10) համապատասխան պաշտոնատար անձանց հետ կնքել նյութական պատասխանատվության պայմանագրեր:

**2.1.4. Համակարգողն իրավունք ունի Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝**

1) կազմակերպության հաշվետվությունների կազմման և ներկայացման պահանջների խախտման փաստերի պարբերական բնույթ կրելու դեպքում, ինչպես նաև, երբ ներկայացված ֆինանսատնտեսական գործունեության տարեկան ծրագրային ցուցանիշների և (կամ) այդ ցուցանիշների կատարման վերաբերյալ հաշվետվություններում ներառված տվյալների հավաստիությունը լուրջ կասկածների տեղիք է տալիս, իր նախաձեռնությամբ իրականացնել ներքին աուդիտ, այս հիմքով և կազմակերպությանը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված հատկացումների շրջանակներում և այլ գործունեության արդյունքում ստացված ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետությունը բացահայտելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ֆինանսական կառավարման գործառույթ իրականացնելու լիազորություններ ունեցող մարմնի ղեկավարի հանձնարարությամբ (համապատասխան) կառուցվածքային ստորաբաժանման հիմնավորված առաջարկության դեպքում իրականացնում են հերթական կամ արտահերթ ստուգումներ.

2) հանձնարարել՝ սույն կետի 3-րդ ենթակետով նախատեսված աուդիտի կամ ստուգումների արդյունքում խախտումների փաստերի հաստատման դեպքում համապատասխան պաշտոնատար անձից պահանջել բացատրություններ, քննարկել դրանք և անհրաժեշտության դեպքում նրա նկատմամբ կիրառել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կարգապահական պատասխանատվության համապատասխան միջոցներ՝ ըստ թույլ տրված խախտման բնույթի և չափերի:

3) աուդիտի կամ ստուգումների արդյունքում կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության ընթացքում տնօրենի կամ այլ պատասխանատու պաշտոնատար անձի կողմից ակնհայտ միտումնավոր բնույթ կրող խախտումներ (չարաշահումներ և ֆինանսական միջոցների ոչ նպատակային օգտագործման փաստեր) հայտնաբերելու դեպքում, երբ դրանք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել միջոցների հնարավոր վատնումների (յուրացումների), տվյալ պատասխանատու պաշտոնատար անձի պատասխանատվության հարցի առնչությամբ տեղյակ պահել իրավապահ մարմիններին՝ համապատասխան վարույթ իրականացնելու համար:

**2.1.5.Գործատուն պարտավոր է.**

1) օժանդակել համակարգողին՝ իրականացնելու օրենսդրությունից, կազմակերպության կանոնադրությունից և պայմանագրից բխող իր իրավունքներն ու պարտականությունները.

2) համակարգողի լիազորությունները դադարեցնելիս օրենքով սահմանված կարգով լուծել նաև նրանց կողմից կազմակերպությանը կամ պետությանը պատճառված վնասի փոխհատուցման հարցը.

3) Գործատուն և համակարգողը կարող են ունենալ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներ և կրել պատասխանատվություն:

**3. Համակարգողի վարձատրությունը, աշխատանքի և հանգստի ժամանակը.**

3.1. Համակարգողի աշխատավարձը (ամսական պաշտոնային դրույքաչափը) սահմանվում է 277990 (երկու հարյուր յոթանասունյոթ հազար ինը հարյուր իննսուն) Հայաստանի Հանրապետության դրամ: Վարձատրության այլ տեսակները (պարգևատրումներ, լրավճարներ) սահմանվում են լիազոր մարմնի կողմից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.2. Համակարգողի համար սահմանվում է 5-օրյա աշխատանքային շաբաթ (հանգստյան օրը՝ շաբաթ և կիրակի): Համակարգողի աշխատանքային շաբաթը կազմում է ոչ ավել քան 40 ժամ:

3.3. Համակարգողը կարող է ներգրավվել արտաժամյա աշխատանքներում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.4 Համակարգողին Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով տրամադրվում է 25 աշխատանքային օր տևողությամբ (հնգօրյա աշխատանքային ռեժիմի դեպքում) ամենամյա վարձատրվող արձակուրդ: Արձակուրդի տրամադրման կոնկրետ ժամկետները համաձայնեցվում են լիազորված պետական մարմնի ղեկավարի հետ:

3.5. Համակարգողի խնդրանքով նրան կարող է տրամադրվել նաև չվճարվող արձակուրդ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

**4. Պայմանագրի ուժի մեջ մտնելը և գործողության ժամկետը, դրանում փոփոխություններ, լրացումներ կատարելու կարգը.**

4.1.Պայմանագիրն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հոկտեմբերի 1-ից և գործում է հինգ տարի ժամկետով:

4.2. Պայմանագրում կատարված փոփոխությունները, լրացումները և հավելվածներն իրավական ուժ ունեն և պայմանագրի անբաժանելի մասն են, եթե դրանք կատարվել են գրավոր և ստորագրվել կողմերի կողմից:

**5. Պայմանագրի լուծումը**

5.1. Պայմանագիրը լուծվում է, եթե՝

1) պայմանագրով նախատեսված ժամկետն ավարտվել է.

2) համակարգողը ներկայացնում է դիմում պայմանագրի լուծման մասին.

3) լրացել է համակարգողի 65 տարին.

4) կազմակերպությունը լուծարվել է կամ վերակազմակերպվել.

5) իր գրավոր համաձայնությամբ ընտրվել կամ նշանակվել է այլ պաշտոնում կամ անցել է իր պաշտոնին անհամատեղելի այլ աշխատանքի.

6) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով համակարգողը ավելի քան 4 ամիս անընդմեջ չի ներկայացել աշխատանքի.

7) համակարգողը ավելի քան 3 օր անընդմեջ անհարգելի պատճառով չի ներկայացել աշխատանքի.

8) համակարգողը ընտրվել (նշանակվել) է օրենքի պահանջների խախտմամբ.

9) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա համակարգողը ճանաչվել է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած.

10) համակարգողը իր գործառույթներն իրականացնելիս կազմակերպությանը կամ պետությանը իր մեղքով հասցրել է վնաս, որի գումարը գերազանցում է կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի արժեքի 5 տոկոսը.

11) համակարգողը դատապարտվել է հանցագործության կատարման համար և նրա դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.

12) համակարգողին օրենքի համաձայն արգելվել է որոշակի պաշտոններ զբաղեցնել, կամ նա զրկվել է որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից.

13) համակարգողը նախորդ 3 տարվա ընթացքում եղել է սնանկանալու պատճառով լուծարված և պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար.

14) համակարգողը կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը.

15) օրինական ուժի մեջ է մտել համակարգողի նկատմամբ կայացված՝ մեղադրական դատավճիռը.

16) կազմակերպությունը դատական կարգով ճանաչվել է սնանկ կամ ունի դատական կարգով որոշված և դատարանի կողմից համապատասխան վճիռն ընդունելուց հետո վեց ամսվա ընթացքում իր մեղքով չկատարված գույքային պարտավորություն.

17) կազմակերպության կողմից վճարման ենթակա հարկերը կամ սոցիալական ապահովագրության հիմնադրամի վճարներն իր մեղքով, սահմանված ժամկետից հետո, հաշվետու ժամանակաշրջանում չի վճարել.

18) մեկ տարվա ընթացքում օրենքի խախտման համար ենթարկվել է կրկնակի կարգապահական պատասխանատվության.

19) պայմանագրով սահմանված պարտավորությունները կատարվել են ոչ պատշաճ կամ չեն կատարվել.

5.2. Համակարգողի լիազորությունները դադարեցված են համարվում նրա մահվամբ:

## 6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Կողմերը պատասխանատվություն են կրում օրենքներով և այլ իրավական ակտերով, կանոնադրությամբ և պայմանագրով սահմանված իրենց պարտականությունների չկատարման, ոչ պատշաճ կատարման կամ վերազանցման համար պայմանագրով և օրենքով նախատեսված կարգով:

**7. Վեճերի լուծման կարգը**

7.1. Կողմերի միջև առաջացած վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**8. Այլ դրույթներ**

8.1.Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, ստորագրված և կնքված է 3 հավասարազոր օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**9. Կողմերի հասցեները և ստորագրությունները**

**Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ՝**

**Վահրամ Խաչատրյան**

**Հասցեն՝ ք. Արմավիր, Աբովյան 71**

**«01» հոկտեմբերի 2025թ.**

Կ.Տ.

**«Ծիածանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ վարչատնտեսական մասի համակարգող՝**

**Ռուզաննա Գաբրիելյան**

**Հասցեն՝** Վաղարշապատ, Անդրանիկի 4 թղմ., 62 տուն

**«01» հոկտեմբերի 2025թ.**

Կ.Տ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

«01» հոկտեմբերի 2025թ. N ՄՊ/ 873 -Ա

ք. Արմավիր

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻՆ ԵՎ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂՆԵՐԻՆ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի դպրոցների տնօրեններին և վարչատնտեսական մասի համակարգողներին ուսուցչի օրվա կապակցությամբ խրախուսել՝ միանվագ տրամադրել 50000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, համաձայն N1 և N2 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված N1
ՀՀ Արմավիրի մարզպետի 01 հոկտեմբերի 2025թ.-ի
ՆՄՊ/873-Ա որոշման

# Ցանկ
# ՀՀ Արմավիրի մարզի դպրոցների խրախուսվող տնօրենների
# (ուսուցչի օր)

| | Դպրոց | Ազգանուն | Անուն | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | Արմավիրի Վ.Բախշյանի անվան Հ.2 հիմնական դպրոց | Առաքելյան | Գևորգ | |
| 2 | Արմավիրի N 3 հիմնական դպրոց | Բաղդասարյան | Արմեն | |
| 3 | Արմավիրի Զորավար Անդրանիկ Օզանյանի անվան Հ. 5 հիմնական դպրոց | Գասպարյան | Գոհար | |
| 4 | Արմավիրի Մովսես Սիլիկյանի անվան N 6 հիմնական դպրոց | Նառա | Սաժումյան | պաշտոնակատար |
| 5 | Արմավիրի Հ. 8 հիմնական դպ | Ավետիսյան | Սյուզաննա | պաշտոնակատար |
| 6 | Արմավիրի N 9 հիմնական դպրոց | Այվազյան | Գոռ | |
| 7 | Արմավիրի Հ.10 հիմնական դպրոց | Սարգսյան | Գայանե | պաշտոնակատար |
| 8 | Մեծամորի N 1 հիմնական դպրոց | Գևորգյան | Նունե | |
| 9 | Սարդարապատի միջնակարգ դպրոց | Սմբատյան | Կարինե | |
| 10 | Բամբակաշատի միջնակարգ դպրոց | Պարոնյան | Գայանե | |
| 11 | Շենավանի միջնակարգ դպրոց | Հովհաննիսյան | Սարգիս | |
| 12 | Նալբանդյանի Պերճուհի և Արմէն Նալպանտեանների անվան միջնակարգ դպրոց | Գևորգյան | Տիգրան | |
| 13 | Արմավիրի միջնակարգ դպրոց | Ասմարյան | Ռուզաննա | |
| 14 | Ջանֆիդայի Է.Դաշտոյանի անվան միջնակարգ դպրոց | Պետրոսյան | Սիրանուշ | պաշտոնակատար |
| 15 | Մրգաշատի Վ. Ափոյանի անվան Հ. 1 միջնակարգ դպրոց | Մարգարյան | Հայկ | պաշտոնակատար |
| 16 | Մրգաշատի Մ. Մաղաքյանի անվան Հ. 2 միջնակարգ դպրոց | Գևորգյան | Էլմիրա | |
| 17 | Նոր Արտագերսի միջնակարգ դպրոց | Իվանյան | Նարինե | |
| 18 | Նոր Արմավիրի միջնակարգ դպրոց | Մարգարյան | Թագուհի | պաշտոնակատար |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 19 | Ամասիայի միջնակարգ դպրոց | Հարությունյան | Օֆելյա | պաշտոնակատար |
| 20 | Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց | Պապոյան | Գարան | պաշտոնակատար |
| 21 | Ջրաշենի միջնակարգ դպրոց | Հակոբյան | Արտավազդ | պաշտոնակատար |
| 22 | Արտաշարի միջնակարգ դպրոց | Պետրոսյան | Լարիսա | |
| 23 | Հայկավանի միջնակարգ դպրոց | Ալավերդյան | Սոֆյա | |
| 24 | Վարդանաշենի Մայիս Մինասյանի անվան միջնակարգ դպրոց | Մինասյան | Դավիթ | |
| 25 | Չարթոնքի միջնակարգ դպրոց | Մելքոնյան | Նարեկ | |
| 26 | Երասխահունի Մարտիկ Գևորգյանի անվան միջնակարգ դպրոց | Գրիգորյան | Ալինա | պաշտոնակատար |
| 27 | Եղեգնուտի միջնակարգ դպրոց | Մարգարյան | Հովհաննես | |
| 28 | Բերքաշատ միջնակարգ դպրոց | Թովմասյան | Նաիրա | պաշտոնակատար |
| 29 | Մարգարայի միջնակարգ դպրոց | Մուրադյան | Արուսյակ | |
| 30 | Տանձուտի միջնակարգ դպրոց | Հովհաննիսյան | Նոյեմզար | պաշտոնակատար |
| 31 | Արգավանդի միջնակարգ դպրոց | Դանիելյան | Խաչատուր | |
| 32 | Այգեշատի Յու. Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոց | Սարգսյան | Էդգար | |
| 33 | Մայիսյանի միջնակարգ դպրոց | Ալիսա | Սահակյան | պաշտոնակատար |
| 34 | Արազափի Թ. Հուրյանի անվան միջնակարգ դպրոց | Կարապետյան | Չինար | |
| 35 | Լուկաշինի Հունան Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց | Խաչատրյան | Նարինե | |
| 36 | Հացիկի Ավետիս Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոց | Հայրապետյան | Հրաչուհի | |
| 37 | Գետաշենի միջնակարգ դպրոց | Մուքոյան | Գևորգ | |
| 38 | Ալաշկերտի Հ.Քոչարի անվան միջնակարգ դպրոց | Բաղդասարյան | Նաիրա | պաշտոնակատար |
| 39 | Փշատավանի միջնակարգ դպրոց | Ղորղանյան | Նելլի | |
| 40 | Արևիկի միջնակարգ դպրոց | Ավագյան | Արուսյակ | |
| 41 | Արաքսի Հ. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց | Սահակյան | Սյուզաննա | պաշտոնակատար |
| 42 | Լենուղու Ջիվանու անվան միջնակարգ դպրոց | Պողոսյան | Լուսինե | |
| 43 | Այգեվանի Մովսես Խորենացու անվան միջնակարգ դպրոց | Մովսիսյան | Արմինե | պաշտոնակատար |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 44 | Խանջյանի Արմեն Բենիամինի Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց | Հովսեփյան | Աննա | |
| 45 | Նորապատի միջնակարգ դպրոց | Սահակյան | Նաիրա | |
| 46 | Նորավանի միջնակարգ դպրոց | Միքաելյան | Աշխեն | պաշտոնակատար |
| 47 | Վաղարշապատի Մ.Մաշտոցի անվան N 1 հիմնական դպրոց | Պետրոսյան | Լիլիթ | |
| 48 | Վաղարշապատի Հ. Հովհաննիսյանի անվան N 3 հիմնական դպրոց | Ներսիսյան | Գրետա | |
| 49 | Վաղարշապատի Խ.Աբովյանի անվան N 4 հիմնական դպրոց | Մուրադյան | Արուսյակ | |
| 50 | Վաղարշապատի <<Ներսիսյան>> № 6 հիմնական դպրոց | Ենգիբարյան | Սեդա | |
| 51 | Վաղարշապատի Երվանդ Օտյանի անվան N 7 հիմնական դպրոց | Հայրապետյան | Վարուժան | |
| 52 | Վաղարշապատի Գ.Նժդեհի անվան N 8 հիմնական դպրոց | Խաչատրյան | Օֆելյա | պաշտոնակատար |
| 53 | Վաղարշապատի Ռ.Պատկանյանի անվան N 9 հիմնական դպրոց | Սամվելյան | Մարետա | |
| 54 | Վաղարշապատի Վահան Ռշտունու անվան N 11 հիմնական դպրոց | Վիրաբյան | Աստղիկ | պաշտոնակատար |
| 55 | Վաղարշապատի Զորավար Անդրանիկի անվան N 12 հիմնական դպրոց | Բաբայան | Ալիսա | |
| 56 | Արտիմետի միջնակարգ դպրոց | Դայան | Ժաննա | |
| 57 | Ակնալճի Ա. Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց | Բաղդասարյան | Ելենա | պաշտոնակատար |
| 58 | Ակնաշենի միջնակարգ դպրոց | Բաղդասարյան | Նորիկ | |
| 59 | Աղավնատան Ղ. Աբգարյանի անվան միջնակարգ դպրոց | Վարդանյան | Ամալյա | պաշտոնակատար |
| 60 | Ամբերդի Հ.Նավասարդյանի անվան միջնակարգ դպրոց | Մաղաքյան | Զոհրաբ | |
| 61 | Այգեշատի միջնակարգ դպրոց | Խաչատրյան | Սուսաննա | |
| 62 | Ապագայի Հովսեփ Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց | Մխիթարյան | Մխիթար | |
| 63 | Առատաշենի միջնակարգ դպրոց | Բիլյան | Միրանուշ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 64 | Արաքսի միջնակարգ դպրոց | Նավասարդյան | Սուրիկ | |
| 65 | Արագածի Մ. Մեխակյանի անվան միջնակարգ դպրոց | Անդրեասյան | Գրետա | |
| 66 | Արշալույսի Ս.Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց | Հովսեփյան | Մարիամ | |
| 67 | Բաղրամյանի միջնակարգ դպրոց | Փիլիպոսյան | Լալա | պաշտոնակատար |
| 68 | Գայի միջնակարգ դպրոց | Հարությունյան | Հայկազ | |
| 69 | Գեղակերտի միջնակարգ դպրոց | Համբարձումյան | Անուշ | |
| 70 | Գրիբոյեդովի Վ. Ռոստոմյանի անվան միջնակարգ դպրոց | Շահինյան | Սաթիկ | |
| 71 | Խորոնքի միջնակարգ դպրոց | Ասատրյան | Վարդուհի | |
| 72 | Ծիածանի միջնակարգ դպրոց | Գազազյան | Գոհար | |
| 73 | Հայթաղի Հ. Կարապետյանի անվան միջնակարգ դպրոց | Վարդան | Ասատրյան | պաշտոնակատար |
| 74 | Հայկաշենի Գ.Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց | Մինասյան | Գևորգ | |
| 75 | Մերձավանի միջնակարգ դպրոց | Մկրտումյան | Ալվինա | |
| 76 | Մուսալեռի Ֆ.Վերֆելի անվան միջնակարգ դպրոց | Սվարյան | Նաիրա | |
| 77 | Նորակերտի միջնակարգ դպրոց | Վեզիրյան | Արմեն | |
| 78 | Շահումյանի միջնակարգ դպրոց | Խաչատրյան | Լենա | |
| 79 | Ոսկեհատի միջնակարգ դպրոց | Շմավոնյան | Սյուզաննա | |
| 80 | Ջրառատի Թաթուլ Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց | Համբարյան | Մելանյա | |
| 81 | Տարոնիկի Գառնիկ Գառնիկյանի անվան միջնակարգ դպրոց | Ղավալյան | Արմինե | |
| 82 | Այգեկի Մուշեղ Մովսիսյանի անվան միջնակարգ դպրոց | Արիստակեսյան | Ռուզաննա | |
| 83 | Արևաշատի միջնակարգ դպրոց | Առաքելյան | Հասմիկ | |
| 84 | Դողսի միջնակարգ դպրոց | Ավետիսյան | Գոհար | |
| 85 | Լուսագյուղի միջնակարգ դպրոց | Առաքելյան | Արմեն | |
| 86 | Ծաղկալանջի միջնակարգ դպրոց | Եգորյան | Հրաչյա | |
| 87 | Մրգաստանի Կ. Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց | Ասատրյան | Նունուֆար | |
| 88 | Պտղունքի Տիգրան Մեծի անվան միջնակարգ դպրոց | Գրիգորյան | Արմինե | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 89 | Դաշտի միջնակարգ դպրոց | Պողոսյան | Մարգարիտ | պաշտոնակատար |
| 90 | Մեծամորի միջնակարգ դպրոց | Եղիազարյան | Գասպար | |
| 91 | Փարաքարի միջնակարգ դպրոց | Հակոբյան | Անուշ | |
| 92 | Թաիրովի միջնակարգ դպրոց | Բաղումյան | Մարինե | |
| 93 | Լեռնամերձի հիմնական դպրոց | Ոսկանյան | Շուշանիկ | |
| 94 | Ֆերիկի Ոզալիե Ռաշիդի Օզմանյանի անվան հիմնական դպրոց | Ֆարֆարյան | Նարինե | |
| 95 | Ջրարբիի միջնակարգ դպրոց | Զաքարյան | Նարեկ | |
| 96 | Հովտամեջի միջնակարգ դպրոց | Նավասարդյան | Լիաննա | |
| 97 | Դալարիկի Հ.Հովհաննիսյանի անվան Հ.1 միջնակարգ դպրոց | Հեբոյան | Բավական | |
| 98 | Արևադաշտի միջնակարգ դպրոց | Պետրոսյան | Ռուստամ | պաշտոնակատար |
| 99 | Մյասնիկյանի Արայի անվան միջնակարգ դպրոց | Պետրոսյան | Լիլիթ | |
| 100 | Արտամետի Գուրգեն Մարգարյանի անվան միջնակարգ դպրոց | Ղազարյան | Մելքոն | |
| 101 | Քարակերտի N 1 միջնակարգ դպրոց | Մինասյան | Աշխեն | |
| 102 | Քարակերտի N 2 միջնակարգ դպրոց | Պապոյան | Վարդիթեր | |
| 103 | Բաղրամյանի միջնակարգ դպրոց | Գրիգորյան | Աննա | պաշտոնակատար |
| 104 | Տալվորիկի հիմնական դպրոց | Սաֆարյան | Մարինե | |
| 105 | Երվանդաշատի միջնակարգ դպրոց | Գասպարյան | Լուսինե | |
| 106 | Շենիկի միջնակարգ դպրոց | Վարդանյան | Ժենյա | |
| 107 | Վանանդի միջնակարգ դպրոց | Ասատրյան | Միհր | պաշտոնակատար |
| 108 | Բագարանի միջնակարգ դպրոց | Ավետիսյան | Գեղեցիկ | |
| 109 | Լեռնագոգի Օնիկ Փակումեանի անվան միջնակարգ դպրոց | Մկրտչյան | Ռուզաննա | |
| 110 | Արգինայի միջնակարգ դպրոց | Մարկոսյան | Նարինե | |

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված N2
ՀՀ Արմավիրի մարզպետի
01 հոկտեմբերի 2025թ.-ի
NՄՈ/873-Ա որոշման

Ցանկ
ՀՀ Արմավիրի մարզի դպրոցների խրախուսվող վարչատնտեսական մասի համակարգողների
(ուսուցչի օր)

| | *Դպրոց* | *Անուն* | *Ազգանուն* | *Հայրանուն* |
|---|---|---|---|---|
| 1 | Արմավիրի N 3 հիմնական դպրոց | Նվարդ | Ապերյան | Սարգսի |
| 2 | Արմավիրի Զորավար Անդրանիկ Օզանյանի անվան Հ. 5 հիմնական դպրոց | Գերասիմ | Մարտիրոսյան | Սահակի |
| 3 | Արմավիրի Մովսես Սիլիկյանի անվան N 6 հիմնական դպրոց | Աննա | Սահակյան | Լևիկի |
| 4 | Արմավիրի N 9 հիմնական դպրոց | Աննա | Սարուխանյան | Յուրիի |
| 5 | Արմավիրի Հ.10 հիմնական դպրոց | Վարդուհի | Սիմոնյան | Վարդգեսի |
| 6 | Մեծամորի N 1 հիմնական դպրոց | Հայկ | Մնացյան | Ռուստոմի |
| 7 | Բամբակաշատի միջնակարգ դպրոց | Տիգրան | Պողոսյան | Վարդգեսի |
| 8 | Ջանֆիդայի Է.Դաշտոյանի անվան միջնակարգ դպրոց | Սուրեն | Միրզոյան | Օնիկի |
| 9 | Մրգաշատի Վ. Ափոյանի անվան Հ. 1 միջնակարգ դպրոց | Նունե | Կարապետյան | Ռաֆիկի |
| 10 | Ամասիայի միջնակարգ դպրոց | Արտակ | Գրիգորյան | Միշայի |
| 11 | Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց | Սամվել | Պողոսյան | Գրիգորի |
| 12 | Ջրաշենի միջնակարգ դպրոց | Գայանե | Աղաջանյան | Վոլոդյայի |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 13 | Վարդանաշենի Մայիս Մինասյանի անվան միջնակարգ դպրոց | Հակոբ | Սրեյան | Հարությունի |
| 14 | Բերքաշատ միջնակարգ դպրոց | Հայկ | Պողոսյան | Վարդգեսի |
| 15 | Մարգարայի միջնակարգ դպրոց | Ալբերտ | Հարությունյան | Վրեժի |
| 16 | Տանձուտի միջնակարգ դպրոց | Հովհաննես | Հարությունյան | Հակոբի |
| 17 | Արգավանդի միջնակարգ դպրոց | Գոհար | Առաջանյան | Յոլակի |
| 18 | Մայիսյանի միջնակարգ դպրոց | Հռիփսիմե | Մարգարյան | Սարգսի |
| 19 | Ալաշկերտի Հ.Քոչարի անվան միջնակարգ դպրոց | Գառնիկ | Անտոնյան | Էդվարդի |
| 20 | Արաքսի Զ. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց | Ռուդիկ | Սարգսյան | Ժորայի |
| 21 | Լենուղու Ջիվանու անվան միջնակարգ դպրոց | Հասմիկ | Գասպարյան | Ազատի |
| 22 | Այգեվանի Մովսես Խորենացու անվան միջնակարգ դպրոց | Արմեն | Հովհաննիսյան | Ռոբերտի |
| 23 | Վաղարշապատի Հ. Հովհաննիսյանի անվան N 3 հիմնական դպրոց | Լիլիա | Միրզախանյան | Ժորայի |
| 24 | Վաղարշապատի Խ.Աբովյանի անվան N 4 հիմնական դպրոց | Ջուլիետա | Միհերյան | Համբարձումի |
| 25 | Վաղարշապատի <<Ներսիսյան>> № 6 հիմնական դպրոց | Անահիտ | Ավետիսյան | Հրաչյայի |
| 26 | Վաղարշապատի Վահան Ռշտունու անվան N 11 հիմնական դպրոց | Նարինե | Վարդանյան | Երվանդի |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 27 | Աղավնատան Ղ. Աբգարյանի անվան միջնակարգ դպրոց | Սամվել | Հարությունյան | Գագիկի |
| 28 | Արագածի Մ. Մեխակյանի անվան միջնակարգ դպրոց | Ռիմա | Հովագիմյան | Շահենի |
| 29 | Արշալույսի Ս.Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց | Հռիփսիմե | Եփրեմյան | Անդրանիկի |
| 30 | Բաղրամյանի միջնակարգ դպրոց | Դավիթ | Լալայան | Ալեքսանդրի |
| 31 | Գրիբոյեդովի Վ. Ռոստոմյանի անվան միջնակարգ դպրոց | Սիմոն | Թովմասյան | Նորիկի |
| 32 | Մերձավանի միջնակարգ դպրոց | Սիմա | Հակոբյան | Փանոսի |
| 33 | Ոսկեհատի միջնակարգ դպրոց | Սոֆիկ | Պետրոսյան | Հակոբի |
| 34 | Պտղունքի Տիգրան Մեծի անվան միջնակարգ դպրոց | Մելանյա | Մանուկյան | Գագիկի |
| 35 | Դաշտի միջնակարգ դպրոց | Էդգար | Պետրոսյան | Սիսակի |
| 36 | Մեծամորի միջնակարգ դպրոց | Էդվարդ | Պետրոսյան | Արտաշեսի |
| 37 | Թաիրովի միջնակարգ դպրոց | Հայկուհի | Պետրոսյան | Պարսամի |
| 38 | Արևադաշտի միջնակարգ դպրոց | Անահիտ | Ախբաշյան | Հովհաննեսի |
| 39 | Հուշակերտի միջնակարգ դպրոց | Վաչագան | Դանիելյան | Միշայի |
| 40 | Վանանդի միջնակարգ դպրոց | Սուսաննա | Մուշեղյան | Արթուրի |
| 41 | Լեռնագոգի Օնիկ Փակումեանի անվան միջնակարգ դպրոց | Մուշեղ | Գրիգորյան | Գերասիմի |
| 42 | Շենավանի միջնակարգ դպրոց | Համիկ | Շահբազյան | Վահանի |
| 43 | Նոր Արմավիրի միջնակարգ դպրոց | Նարինե | Հակոբյան | Կառլենի |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 44 | Ակնալճի Ա. Հարությունյանի անվան միջնակարգ  դպրոց | Յուրի | Գրիգորյան | Սուրիկի |
| 45 | Արմավիրի Հ. 8 հիմնական դպրոց | Արմեն | Հակոբյան | Գեղամի |
| 46 | Վաղարշապատի Գ.Նժդեհի անվան N 8 հիմնական դպրոց | Անի | Մանուկյան | Գևորգի |

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

«01» հոկտեմբերի 2025թ. ՆՄՈ/874-Ա

ք. Արմավիր

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ « ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿՈՒ ԱՆՎԱՆ N 5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ » ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի N46-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված N1 հավելվածի 6-րդ կետի 5-րդ ենթակետով և 18-րդ կետով, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2025 թվականի հիմնական միջոցառումների պլան»-ի 6.4.1-ին կետի պահանջները.

**որոշում եմ՝**

1. 2025 թվականի հոկտեմբերի 23-ին «Վաղարշապատի Մաքսիմ Գորկու անվան N 5 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում անցկացնել ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն «Հրդեհաշիջման և որոնողափրկարարական աշխատանքների իրականացումը ուսումնական հաստատությունում» թեմայով:

2. Ուսումնավարժությանը նախապատրաստվելու և այն արդյունավետ անցկացնելու նպատակով սահմանել՝

1) ուսումնավարժության ղեկավար հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Վահրամ Խաչատրյանը.

2) ուսումնավարժության ղեկավարի տեղակալ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետ, գնդապետ Գևորգ Հակոբյանը.

3) ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Արմավիրի

մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ, փոխգնդապետ Մուշեղ Պետրոսյանը:

3. Հաստատել ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության ղեկավարման շտաբի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի:

4. Հաստատել ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանը՝ համաձայն N 2 հավելվածի:

5. Ուսումնավարժությանն ընդգրկել՝

1) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչությանը.

2) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության Վաղարշապատի հրշեջ-փրկարարական ջոկատից 2 (երկու) մարտական հաշվարկ.

3) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության Արմավիրի հրշեջ-փրկարարական ջոկատից 1 (մեկ) մարտական հաշվարկ

4) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության «Մուսալեռ» մասնաճյուղի Էջմիածնի շրջանային էլեկտրական ցանցից 1 (մեկ) մասնագիտացված խումբ.

5) «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության Արմավիրի գազաֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղի էջմիածնի տարածքային տեղամասից 1 (մեկ) վթարային խումբ.

6) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Վաղարշապատի բաժնից 1 (մեկ) վերակարգ

7) «Վաղարշապատի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության շտապ բժշկական օգնության ծառայությունից մեկ գծային բրիգադ.

8) «Վաղարշապատի Մաքսիմ Գորկու Անվան թիվ 5 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրինությանը, ուսուցչական և աշակերտական կազմերին:

6. Ուսումնավարժության ղեկավարի տեղակալին՝

1) կազմակերպել ուսումնավարժության մասնակիցների նախապատրաստումը՝ համաձայն հաստատված օրացուցային պլանի.

2) կազմակերպել համագործակցություն ուսումնավարժության ղեկավարման շտաբի և ուսումնավարժությանը ներգրավված ուժերի միջև.

3) ուսումնավարժության անցկացման պատրաստության մասին զեկուցել 2025 թվականի հոկտեմբերի 21-ին:

7. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետին՝

1) ապահովել ուսումնավարժության անցկացման համար սահմանված փաստաթղթերի ժամանակին մշակումը.

2) ուսումնավարժության անցկացումից հետո 5-օրյա ժամկետում ներկայացնել արդյունքների ամփոփման արձանագրությունը:

8. Ուսումնավարժության մասնակիցներին՝

1) ճշգրտել համապատասխան փոխգործողությունների պլանները.

2) պատրաստ վիճակի բերել ուժերն ու միջոցները, համալրել ստորաբաժանումները հաշվեցուցակային գույքով և սարքավորումներով.

3) ուսումնավարժության նախապատրաստման հարցերով համագործակցել ուսումնավարժության ղեկավարման շտաբի հետ.

4) ուսումնավարժության ընթացքում խստագույնս պահպանել անվտանգության կանոնները, չվնասել պետական և մասնավոր գույքը.

5) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին:

9. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել ուսումնավարժության ղեկավարի տեղակալ, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետ, գնդապետ Գևորգ Հակոբյանին:

10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏ՝** Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հավելված N1
ՀՀ Արմավիրի մարզպետի
2025 թվականի հոկտեմբերի «01»-ի
ՆՄՊ/874-Ա որոշման

ԿԱԶՄ
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ « ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿՈՒ ԱՆՎԱՆ ԹԻՎ 5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ » ՊՈԱԿ-ՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՇՏԱԲԻ

| Հ/Հ | Ազգանուն, Անուն, Հայրանուն | Զբաղեցրած պաշտոնը |
|---|---|---|
| 1. | Մուշեղ Աշոտի Պետրոսյան | Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ, փ/ծ փոխգնդապետ |
| 2. | Ջոնիկ Հենրիկի Բարսեղյան | Ուսումնավարժության ղեկավարման շտաբի խաղարկման և վերլուծման խմբի ղեկավար՝ Արմավիրի մարզային փրկարարական վարչության ՃԿԿ պետ, փ/ծ փոխգնդապետ |
| 3. | Գառնիկ Կառլենի Ղուկասյան | Ուսումնավարժության ղեկավարման շտաբի խաղարկման և վերլուծման խմբի անդամ՝ Արմավիրի ՄՓՎ ՃԿԿ ավագ հրահանգիչ, փ/ծ մայոր |
| 4. | Գառնիկ Վաչագանի Մկրտչյան | Ուսումնավարժության ղեկավարման շտաբի խաղարկման և վերլուծման խմբի անդամ՝ Արմավիրի ՄՓՎ ԲՊԲ պետ փ/ծ փոխգնդապետ |
| 5. | Վահան Ազատի Մկրտչյան | Ուսումնավարժության ղեկավարման շտաբի գործնական միջոցառումների կազմակերպման խմբի ղեկավար՝ Վաղարշապատի ՀՓՋ հրամանատար, փ/ծ փոխգնդապետ |
| 6. | Լյովա Վահրամի Պողոսյան | Ուսումնավարժության ղեկավարման շտաբի գործնական միջոցառումների կազմակերպման խմբի անդամ՝ Արմավիրի ՄՓՎ ՃԿԿ ՕՀՀ ավագ հրահանգիչ, փ/ծ լեյտենանտ |
| 7. | Ավետիք Վահենի Հարությունյան | Ուսումնավարժության ղեկավարման շտաբի գործնական միջոցառումների կազմակերպման խմբի անդամ՝ Արմավիրի ՄՓՎ ՃԿԿ ՕՀՀավագ հրահանգիչ, փ/ծ մայոր |

**Գլխավոր քարտուղար՝** **Ա․Հովհաննիսյան**

Восстановимая подпись

X

ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

Հավելված N2
ՀՀ Արմավիրի մարզպետի
2025 թվականի հոկտեմբերի «01»-ի
ՆՄՈ/874-Ա որոշման

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ

ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ- ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

| Հ/Հ | *Միջոցառման անվանումը* | *Կատարման ժամկետները* | *Պատասխանատու կատարողներ* | *Նշ.կատարման մասին* |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| | *1. Փաստաթղթերի մշակում* | | | |
| 1. | Ելակետային տվյալների որոշում՝ վայր, մտահղացում, մասնակիցների կազմ, անցկացման կարգ | մինչև 15.09 | Ուսումնավարժության ղեկավար, ղեկավարման շտաբ | |
| 2. | Մտահղացման սխեմայի մշակում | մինչև 22.09 | Ղեկավարման շտաբ | |
| 3. | Ցուցադրական ՀՏՈՒ-ի անցկացման պլանի մշակում | մինչև 23.09 | Ղեկավարման շտաբ | |
| 4. | Ցուցադրական ՀՏՈւ-ի փաստաթղթերի հաստատման ներկայացում | մինչև 20.10 | Ղեկավարման շտաբի պետ | |
| | *2. Ղեկավար կազմի նախապատրաստում* | | | |
| 5. | ՀՏՈՒ կազմակերպման և անցկացման փաստաթղթերի ուսումնասիրում | մինչև 10.10 | Ուսումնավարժության ղեկավար, ղեկավարման շտաբ | |
| 6. | «Որոնողափրկարարական աշխատանքների կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 08.06. 2010թ. N 855-Ն որոշման ուսումնասիրում | մինչև 11.10 | Ուսումնավարժության ղեկավար, ղեկավարման շտաբի պետ | |
| | *3. Ուսուցանվողների նախապատրաստումը* | | | |
| 7. | ՈՒսումնավարժության փաստաթղթերի փաթեթի ծանոթացում մասնակիցներին իրենց առնչվող մասով | մինչև 14.10 | Ղեկավարման շտաբի պետ | |
| 8. | Փոխհամագործակցության պլանների ճշգրտում | մինչև 14.10 | Ղեկավարման շտաբ, համապատասխան ծառայությունների պետեր | |
| 9. | Ուսումնավարժությանը ընդգրկվող տրանսպորտային միջոցների և համապատասխան գույքի ու տեխնիկայի վիճակի ստուգում: | մինչև 15.10 | Համապատասխան ստորաբաժանման հրամանատար | |
| 10. | Անձնակազմին անվտանգության կանոնների հետ ծանոթացում | մինչև 15.10 | Համապատասխան ստորաբաժանման հրամանատար | |
| | *4. Ուսումնավարժության գործնական տեղամասերի նախապատրաստում* | | | |
| 11. | Ուսումնավարժության վայրի տեղազննում | մինչև 21.10 | Ուսումնավարժության ղեկավար Ղեկավարման շտաբի | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | պետ | |
| 12. | Գործնական միջցառումների վայրի նախապատրաստում | մինչև 22.10 | Գործնական միջցառումների խմբի ղեկավար | |
| 13. | Փրկարարական գույքի, փոքր մեխանի-զացիայի, բուժօգնության միջոցների նախապատրաստում | մինչև 22.10 | Գործնական միջցառումների խմբի ղեկավար | |

**Գլխավոր քարտուղար՝** **Ա. Հովհաննիսյան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի   Մ Ա Ր Զ Պ Ե Տ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<01 >հոկտեմբերի------------2025թ.                N ՄՈ/ 875 -Ա

ք. Արմավիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12-Ի ՆՄՈ/581-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2025 թվականի հոկտեմբերի 1-ի N ՄՈ/ 872-Ա որոշումը.

**ո ր ո շ ու մ  ե մ՝**

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2025 թվականի հունիսի 12-ի ««Ծիածանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի գործառույթների իրականացումը Գոհար Գազազյանին վերապահելու մասին» ՆՄՈ/872-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՄԱՐԶՊԵՏ՝**     Восстановимая подпись     **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի   Մ Ա Ր Զ Պ Ե Տ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<02>> հոկտեմբերի 2025թ. N ՄՈ/876 - Ա

ք. Արմավիր

### «ԽԱՆՋՅԱՆԻ ԱՐՄԵՆ ԲԵՆԻԱՄԻՆԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՆՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Աննա Հովսեփյանի 2025 թվականի հոկտեմբերի 2-ի դիմումը.

**ո ր ո շ ու մ   ե մ՝**

1. «Խանջյանի Արմեն Բենիամինի Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Աննա Հովսեփյանին տրամադրել 2023-2024 թվականների աշխատանքային տարվա երկարացված արձակուրդի մասը՝ 2025 թվականի հոկտեմբերի 9-ից 16-ը ներառյալ՝ 6 աշխատանքային օր տևողությամբ:
2. Աննա Հովսեփյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Խանջյանի Արմեն Բենիամինի Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Խանջյանի Արմեն Բենիամինի Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ Համմիկ Շաքրիկյանին:
3. «Խանջյանի Արմեն Բենիամինի Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ Համմիկ Շաքրիկյանի աշխատավարձի վճարումը 2025 թվականի հոկտեմբերի 9-ից 16-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Աննա Հովսեփյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվական հոկտեմբերի 17-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

«02» հոկտեմբերի 2025թ. N ՄՈ/877 - Ա

ք. Արմավիր

### «ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԵՎ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 13-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Աննա Գրիգորյանի 2025 թվականի հոկտեմբերի 2-ի դիմումը.

**ո ր ո շ ու մ   ե մ՝**

1. «Բաղրամյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի և վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունները կատարող Աննա Գրիգորյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդի մասը՝ 2025 թվականի հոկտեմբերի 6-ից 10-ը ներառյալ՝ 5 աշխատանքային օր տևողությամբ:
2. Աննա Գրիգորյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Բաղրամյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի և վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունների կատարումը վերապահել «Բաղրամյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսուցչի օգնական Զվարթ Պետրոսյանին:
3. «Բաղրամյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսուցչի օգնական Զվարթ Պետրոսյանի աշխատավարձի վճարումը 2025 թվականի հոկտեմբերի 6-ից 10-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Աննա Գրիգորյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի հոկտեմբերի 13-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

«02 հոկտեմբերի» 2025թ. N ՄՌ/878 - Ա

ք. Արմավիր

### «ԱՐՄԱՎԻՐԻ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՕԶԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ. 5 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԳՈՀԱՐ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը, Գոհար Գասպարյանի 2025 թվականի հոկտեմբերի 2-ի դիմումը.

**ո ր ո շ ու մ   ե մ՝**

1. «Արմավիրի Զորավար Անդրանիկ Օզանյանի անվան Հ.5 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գոհար Գասպարյանին տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա արձակուրդի մասը՝ 2025 թվականի հոկտեմբերի 13-ից 24-ը ներառյալ՝ 10 աշխատանքային օր տևողությամբ:
2. Գոհար Գասպարյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Արմավիրի Զորավար Անդրանիկ Օզանյանի անվան Հ. 5 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Արմավիրի Զորավար Անդրանիկ Օզանյանի անվան Հ. 5 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Շուշանիկ Աթոյանին:
3. «Արմավիրի Զորավար Անդրանիկ Օզանյանի անվան Հ. 5 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Շուշանիկ Աթոյանի աշխատավարձի վճարումը 2025 թվականի հոկտեմբերի 13-ից 24-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Գոհար Գասպարյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի հոկտեմբերի 27-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 02 հոկտեմբերի 2025թ. N ՄՈ/879-Ա

ք. Արմավիր

### «ԾԻԱԾԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2025 թվականի հոկտեմբերի 1-ի N ՄՈ/872-Ա և N ՄՈ/875-2025 որոշումները, «Ծիածանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում գույքի հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

**որոշում եմ՝**

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի նախագահին (Ա. Հակոբյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել «Ծիածանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Լարիսա Մկրտչյանին (համաձայնությամբ):
3. Հանձնաժողովի նախագահին (Ա. Հակոբյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հինգ աշխատանքային օրվա ընթացքում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝(Ա.Հակոբյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏ՝** Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 **Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հավելված

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզպետի

2025 թվականի հոկտեմբերի 02-ի

N ՄՊ/879 -Ա որոշման

# ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

**Հանձնաժողովի նախագահ՝**

Ա.Հակոբյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի Ֆինանսական վարչության պետ

**Անդամներ՝**

Ս. Սաֆարյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի Ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ

Ն. Ալավերդյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության ավագ մասնագետ

**Հանձնող՝**

Գ. Գազազյան- «Ծիածանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն և վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունները կատարող

**Ընդունող՝**

Ռ. Գաբրիելյան- «Ծիածանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող

Восстановимая подпись

X

ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ**

# ՈՐՈՇՈՒՄ

<<07>> հոկտեմբերի 2025թ. N ՄՌ/ 880 -Ա

ք. Արմավիր

## ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N1239-Ն որոշման 1-ին կետով սահմանված հավելվածի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 21-րդ կետերով, «Մերձավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ կապված քննարկմանը մասնակցելու նպատակով.

**ո ր ո շ ու մ ե մ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Արամ Հովհաննիսյանին 2025 թվականի հոկտեմբերի 6-ին գործուղել քաղաք Երևան:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը (պետ՝ Ա. Հակոբյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը՝ (գլխավոր մասնագետի պարտականությունները կատարող՝ Գ. Գասպարյան) ապահովել հերթապահ մեքենայի տրամադրումը:
4. Փոխադրումն իրականացնել Nissan Tiida մակնիշի 638LL70 համարանիշի ավտոմեքենայով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՄԱՐԶՊԵՏ՝** Недействительная подпись **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ**

# ՈՐՈՇՈՒՄ

<<07>> հոկտեմբերի 2025թ. N ՄՈ/881-Ա

ք. Արմավիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 4-րդ կետով, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 19-րդ մասով, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասով.

**ո ր ո շ ու մ ե մ**

1. Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեով հաստատված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» հոդվածով նախատեսված միջոցների հաշվին 2025 թվականի սեպտեմբեր ամսին աշխատանքային բարձր ցուցանիշներ ապահովելու համար Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի հայեցողական պաշտոններ զբաղեցնող աշխատակիցներին պարգևատրել՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՄԱՐԶՊԵՏ՝** Недействительная подпись **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզպետի
2025թ. Հոկտեմբերի 07-ի ՆՄՈ /881-Ա որոշման

ՑԱՆԿ

*ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի պարգևատրվող աշխատողների*

| հ/հ | Ազգանուն | Անուն | Պաշտոն | պարգևատրման չափը |
|---|---|---|---|---|
| 1 | Պետրոսյան | Արսեն | մարզպետի խորհրդական | 197,600 |
| 2 | Գրիգորյան | Արամ | մարզպետի խորհրդական | 107,782 |
| 3 | Եղիազարյան | Արբակ | մարզպետի խորհրդական | 89,818 |
| 4 | Շառոյան | Թամարա | մարզպետի օգնական | 56,160 |
| 5 | Մարգարյան | Սիրանուշ | մարզպետի տեղակալի օգնական | 17,018 |

Գլխավոր քարտուղար Ա. Հովհաննիսյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի   Մ Ա Ր Զ Պ Ե Տ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<07>> նոյեմբերի 2025թ.   N ՄՊ/ 882 -Ա

ք. Արմավիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 4-րդ կետով, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 19-րդ մասով, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասով.

**ո ր ո շ ո ւ մ   ե մ**

1. Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեով հաստատված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով խնայված միջոցների հաշվին 2025 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում աշխատանքային բարձր ցուցանիշներ ապահովելու համար Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի հայեցողական պաշտոններ զբաղեցնող աշխատակիցներին պարգևատրել՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՄԱՐԶՊԵՏ՝**   Недействительная подпись   **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840279

*Հավելված*

*ՀՀ Արմավիրի մարզպետի*
*2025 թվականի հոկտեմբերի 07-ի*
*ՆՄՊ/882-Ա որոշման*

**ՑՈՒՑԱԿ**
**Հայեցողական պաշտոն զբաղեցնող պարգևատրվող աշխատակիցների**

| հ/հ | Ազգանուն Անուն | | Պաշտոն | Ընդ. հաշվարկ-ված |
|---|---|---|---|---|
| 1 | Պետրոսյան | Արսեն | մարզպետի խորհրդական | 79,040 |
| 2 | Շառոյան | Թամարա | մարզպետի օգնական | 74,880 |

**Գլխավոր քարտուղար՝** **Ա. Հովհաննիսյան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ**

# ՈՐՈՇՈՒՄ

<<08>> նոյեմբերի 2025թ. N ՀԿ/883-Հն

Ք.Արմավիր

## *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25_Ի N ՄՈ/28 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով և <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով.

***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2021 թվականի նոյեմբերի 25-ի <<Գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2009 թվականի նոյեմբերի 12-ի N 151 կարգադրությունը ուժը կորցրած ճանաչելու մասին>> N ՄՈ/28 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

   1) որոշման հավելվածում <<Բ. Նիկողոսյան – Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ>> բառերը փոխարինել <<Ա. Եղիազարյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդական >> բառերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Недействительная подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏ՝** Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 **ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

<<28>> հոկտեմբերի 2025թ. N ՄՊ/884-Ա

ք. Արմավիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 22-Ի N ՄՊ/859-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով.

ո ր ո շ ու մ ե մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2025 թվականի սեպտեմբերի 22-ի «Օֆելյա Խաչատրյանին «Վաղարշապատի Գ.Նժդեհի անվան N 8 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի գործառույթների իրականացումը վերապահելու մասին» NՄՊ/859-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) որոշման նախաբանում «Օֆելյա Խաչատրյանի» բառերը փոխարինել «Անի Մանուկյանի» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Недействительная подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի   Մ Ա Ր Զ Պ Ե Տ

---

## Ո Ր Ո Շ Ու Մ

«28» հոկտեմբերի 2025թ.        N ՄՊ/885-Ա

ք. Արմավիր

**ԱՐՍԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 2.1-ին մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդական Արսեն Պետրոսյանի 2025 թվականի հոկտեմբերի 3-ի դիմումը.

**ո ր ո շ ու մ   ե մ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդական Արսեն Պետրոսյանին 2025 թվականի հոկտեմբերի 8-ից ազատել զբաղեցրած պաշտոնից:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ (պետ՝ Ա. Հակոբյան) կատարել վերջնահաշվարկ (6 օրվա համար) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Недействительная подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179

**ՄԱՐԶՊԵՏ՝**        **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ**

# ՈՐՈՇՈՒՄ

«08» հոկտեմբերի 2025թ. N ՄՊ/886-Ա

ք. Արմավիր

**«ՊՏՂՈՒՆՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐՄԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և «Պտղունքի Տիգրան Մեծի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արմինե Գրիգորյանի 2025 թվականի հոկտեմբերի 6-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Պտղունքի Տիգրան Մեծի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արմինե Գրիգորյանին տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա ամենամյա հերթական երկարացված արձակուրդի մասը՝ 2025 թվականի հոկտեմբերի 13-ից 24-ը ներառյալ՝ 10 աշխատանքային օր տևողությամբ:
2. Արմինե Գրիգորյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Պտղունքի Տիգրան Մեծի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Պտղունքի Տիգրան Մեծի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Սուսաննա Խաչատրյանին:
3. «Պտղունքի Տիգրան Մեծի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Սուսաննա Խաչատրյանի աշխատավարձի վճարումը 2025 թվականի հոկտեմբերի 13-ից 24-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Արմինե Գրիգորյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի հոկտեմբերի 27-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Недействительная подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏ՝** Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

<<08>> հոկտեմբերի 2025թ. N ՄՈ/887-Ա

ք. Արմավիր

## «ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԼԱԼԱ ՓԻԼԻՊՈՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Լալա Փիլիպոսյանի 2025 թվականի հոկտեմբերի 3-ի դիմումը.

**ո ր ո շ ու մ ե մ՝**

1. «Բաղրամյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող Լալա Փիլիպոսյանին տրամադրել 2024-2025 թվականների աշխատանքային տարվա ամենամյա հերթական երկարացված արձակուրդի մասը՝ 2025 թվականի հոկտեմբերի 13-ից 24-ը ներառյալ՝ 10 աշխատանքային օր տևողությամբ:
2. Լալա Փիլիպոսյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Բաղրամյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Բաղրամյանի միջնակարգ դպրոց»

պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Ռուզաննա Գասպարյանին:

3. «Բաղրամյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Ռուզաննա Գասպարյանի աշխատավարձի վճարումը 2025 թվականի հոկտեմբերի 13-ից 24-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:

4. Լալա Փիլիպոսյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվական հոկտեմբերի 27-ից:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՄԱՐԶՊԵՏ՝** Недействительная подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179

**Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի   Մ Ա Ր Զ Պ Ե Տ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<10>> նոյեմբերի 2025թ.                                                    N ՄՈ/888-Ա

ք. Արմավիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի N ՄՈ/886-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով.

**ո ր ո շ ու մ  ե մ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2025 թվականի հոկտեմբերի 8-ի ««Պտղունքի Տիգրան Մեծի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արմինե Գրիգորյանին արձակուրդ տրամադրելու մասին» NՄՈ/886-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 2-րդ կետում «Խաչատրյանին» և 3-րդ կետում «Խաչատրյանի» բառերը համապատասխան հոլովածներով փոխարինել «Մկրտչյան» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՄԱՐԶՊԵՏ՝**                Восстановимая подпись                **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի  Մ Ա Ր Զ Պ Ե Տ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<10>> նոյեմբերի 2025թ. N ՄՊ/889-Ա

ք. Արմավիր

### ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայասատնի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 15-ի N 1287-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 2-րդ, 4-րդ, 9-րդ, 27-րդ և 31-րդ կետով կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիրը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Արամ Հովհաննիսյանի 2025 թվականի հոկտեմբերի 10-ի դիմումը.

ո ր ո շ ո ւ մ ե մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Արամ Հովհաննիսյանին տրամադրել 2023-2024 թվականների աշխատանքային տարվա արձակուրդի չօգտագործված մասը՝ 10 աշխատանքային օր տևողությամբ և 2024-2025 թվականների աշխատանքային տարվա արձակուրդի մասը՝ 1 աշխատանքային օր տևողությամբ՝ 2025 թվականի հոկտեմբերի 17-ից 31-ը ներառյալ՝ 11 աշխատանքային օր տևողությամբ:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի պարտականությունների կատարումը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի

կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ՝ Գոռ Գասպարյանին:

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստի պարտականությունների կատարումը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Արայիկ Հակոբյանին:
4. Արամ Հովհաննիսյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի նոյեմբերի 3-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՄԱՐԶՊԵՏ՝** Восстановимая подпись **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<10 նոյեմբերի 2025թ. N ՄՈ890-Ա

Ք.Արմավիր

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25_Ի N ՄՈ/28 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով և <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով.

***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2021 թվականի նոյեմբերի 25-ի <<Գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2009 թվականի նոյեմբերի 12-ի N 151 կարգադրությունը ուժը կորցրած ճանաչելու մասին>> N ՄՈ/28 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

   1) որոշման հավելվածում << Ա. Եղիազարյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդական >> բառերը փոխարինել <<Ա. Գրիգորյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդական >> բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏ՝** Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 **ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի Մ Ա Ր Զ Պ Ե Տ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<13>> հոկտեմբերի 2025թ. N ՄՊ/891-Ա

ք. Արմավիր

### «ՋՐԱՇԵՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐՏԱՎԱԶԴ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Արտավազդ Հակոբյանի 2025 թվականի հոկտեմբերի 13-ի դիմումը.

**ո ր ո շ ու մ ե մ՝**

1. «Ջրաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող Արտավազդ Հակոբյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդը՝ 2025 թվականի հոկտեմբերի 20-ից նոյեմբերի 21-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:

2. Արտավազդ Հակոբյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Ջրաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Ջրաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգող Գրետա Մարտիրոսյանին:

3. «Ջրաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգող Գրետա Մարտիրոսյանի աշխատավարձի վճարումը 2025 թվականի հոկտեմբերի 20-ից նոյեմբերի 21-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:

4. Արտավազդ Հակոբյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի նոյեմբերի 24-ից:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏ՝** Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

<<14>> հոկտեմբերի 2025թ. N ՄՈ/892-Ա

ք. Արմավիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի ՆՄՈ/889-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 2025 թվականի հոկտեմբերի 13-ի ՆԳՔՀ/751-Ա հրամանը.

**ո ր ո շ ու մ ե մ**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2025 թվականի հոկտեմբերի 10-ի «Արամ Հովհաննիսյանին արձակուրդ տրամադրելու մասին» ՆՄՈ/889-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) որոշման 3-րդ կետում «վարչության պետ Արայիկ Հակոբյանին» բառերը փոխարինել «վարչության գլխավոր մասնագետ Անտոնինա Վասիլյանին» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՄԱՐԶՊԵՏ՝** **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Недействительная подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

<<15>> հոկտեմբերի 2025թ. N ՄՈ/893-Ա

ք. Արմավիր

### «ԾԻԱԾԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՌՈՒԶԱՆՆԱ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ ՉՎՃԱՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով «Ծիածանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Ռուզաննա Գաբրիելյանի 2025 թվականի հոկտեմբերի 14-ի դիմումը.

**ո ր ո շ ու մ  ե մ՝**

1. «Ծիածանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Ռուզաննա Գաբրիելյանին տրամադրել չվճարվող արձակուրդ՝ 2025 թվականի հոկտեմբերի 20-ից 24-ը ներառյալ՝ 5 օր տևողությամբ:
2. Ռուզաննա Գաբրիելյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Ծիածանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունների կատարումը վերապահել «Ծիածանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գոհար Գազազյանին:
3. Ռուզաննա Գաբրիելյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի հոկտեմբերի 27-ից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Недействительная подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179

ՄԱՐԶՊԵՏ՝ Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

«15» նոյեմբերի 2025թ. ՆՄՈ/894-Ա

ք. Արմավիր

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 27-Ի N ՄՈ/412-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Մանվել Մելիքյանի և Նարեկ Խաչատրյանի 2025 թվականի հոկտեմբերի 14-ի դիմումները.

***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2024 թվականի օգոստոսի 27-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ կառավարման մարմինների՝ խորհուրդների անվանական կազմերը հաստատելու մասին N ՄՈ/412-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 1-ին կետում «Մելիքյան Մանվել» բառերը փոխարինել «Հարությունյան Լիաննա» բառերով,
   2) որոշմամբ հաստատված N 10 հավելվածի 1-ին կետում «Մելիքյան Մանվել» բառերը փոխարինել «Ղազարյան Լիանա» բառերով,
   3) որոշմամբ հաստատված N 13 հավելվածի 1-ին կետում «Մելիքյան Մանվել» բառերը փոխարինել «Ղուկասյան Սեդա» բառերով,
   4) որոշմամբ հաստատված N 15 հավելվածի 1-ին կետում «Խաչատրյան Նարեկ» բառերը փոխարինել «Պետրոսյան Գևորգ» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Недействительная подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏ** Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 **Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

<<15>> հոկտեմբերի 2025թ. N ՄՊ/895-Ա

ք. Արմավիր

## ԻՍԿՈՒՀԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ «ՋԱՆՖԻԴԱՅԻ Է. ԴԱՇՏՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՆՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 01-Ի N ՄՊ/517-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետով և 6-րդ կետի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի 2025 թվականի հոկտեմբերի 15-ի զեկուցագիրը և Իսկուհի Աբրահամյանի 2025 թվականի հոկտեմբերի 15-ի համաձայնությունը.

որոշում եմ՝

1. «Ջանֆիդայի Է. Դաշտոյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի նոր պաշտոնակատար նշանակել Իսկուհի Աբրահամյանին:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2024 թվականի նոյեմբերի 01-ի «Սիրանուշ Պետրոսյանին «Ջանֆիդայի Է. Դաշտոյանի անվան միջնակարգ դպրոց»

պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող նշանակելու մասին» ՆՄՈ/517-Ա որոշումը:

3. Իսկուհի Աբրահամյանի աշխատավարձի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան՝ 318304 (երեք հարյուր տասնութ հազար երեք հարյուր չորս) Հայաստանի Հանրապետության դրամ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Недействительная подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏ՝** Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

<<17>> հոկտեմբերի 2025թ. N ՄՈ/ 896 -Ա

ք. Արմավիր

## ԼԻԼԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ «ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Մ. ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ N1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 122-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 123-րդ հոդվածով, 226-րդ հոդվածի 1-ին մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ժդ» ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2025 թվականի հոկտեմբերի 17–ի N 01/11.1/07546-2025 գրությունը և «Վաղարշապատի Մ. Մաշտոցի անվան N1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լիլիթ Պետրոսյանի 2025 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ 116 գրությամբ ներկայացված բացատրությունը, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 26-րդ մասի պահանջները չպահպանելու, Լիլիթ Պետրոսյանի նկատմամբ վստահությունը կորցնելու պատճառով.

**որոշում եմ՝**

1. Լիլիթ Պետրոսյանին ազատել «Վաղարշապատի Մ. Մաշտոցի անվան N1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2021 թվականի փետրվարի 1-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Недействительная подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏ՝** Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«17» հոկտեմբերի 2025թ. ՆՄՈ/897-Ա

ք. Արմավիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի ՆՄՈ/874-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետի հոկտեմբերի 17-ի թիվ 95/11/277 գրությունը։

**որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2025 թվականի հոկտեմբերի 1-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատի Մաքսիմ Գորկու անվան թիվ 5 ավագ դպրոց պետական ոչ առևտրային կազմակերպությունում ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման մասին» N ՄՈ/874-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «հոկտեմբերի 23-ին» բառերը փոխարինել «նոյեմբերի 4-ին» բառերով։

2) որոշմամբ հաստատված «Ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության անցկացման պլան»-ում «հոկտեմբերի 23-ին» բառերը փոխարինել

«նոյեմբերի 4-ին» բառերով, իսկ «23.10.2025թ�» թվերը փոխարինել «04.11.2025թ�» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Недействительная подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏ՝** Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 **Վ� ԽԱՉԱՏՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

<<17>> հոկտեմբերի 2025թ. N ՄՈ/898 - Ա

ք. Արմավիր

## «ԼԵՆՈՒՂՈՒ ՋԻՎԱՆՈՒ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԼՈՒՍԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Լուսինե Պողոսյանի 2025 թվականի հոկտեմբերի 16-ի դիմումը.

**ո ր ո շ ու մ  ե մ՝**

1. «Լենուղու Ջիվանու անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լուսինե Պողոսյանին տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա երկարացված արձակուրդի մասը՝ 2025 թվականի հոկտեմբերի 20-ից 24-ը ներառյալ՝ 5 աշխատանքային օր տևողությամբ:
2. Լուսինե Պողոսյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Լենուղու Ջիվանու անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Լենուղու Ջիվանու անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Վարդինե Հովհաննիսյանին:
3. «Լենուղու Ջիվանու անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Վարդինե Հովհաննիսյանի աշխատավարձի վճարումը 2025 թվականի հոկտեմբերի 20-ից 24-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Լուսինե Պողոսյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի հոկտեմբերի 27-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Недействительная подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի  Մ Ա Ր Զ Պ Ե Տ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» հոկտեմբերի 2025թ. N ՄՈ/899 -Ա

ք. Արմավիր

**ԳՈՀԱՐ ԳՅՈՒԼԲԵԿՅԱՆԻՆ «ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Մ□ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ N1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետով և 6-րդ կետի 2-րդ ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2025 թվականի հոկտեմբերի 17-ի NՄՈ/896-Ա որոշումը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի 2025 թվականի հոկտեմբերի 17-ի զեկուցագիրը□

**ո ր ո շ ու մ  ե մ՝**

1. «Վաղարշապատի Մ□ Մաշտոցի անվան N1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող նշանակել Գոհար Գյուլբեկյանին:
2. Գոհար Գյուլբեկյանի աշխատավարձի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան՝ 318304 (երեք հարյուր տասնութ հազար երեք հարյուր չորս) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Недействительная подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏ՝** Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 **Վ□ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

«17» հոկտեմբերի 2025թ. ՆՄՈ/900-Ա

ք. Արմավիր

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 27-Ի N ՄՈ/412-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Մանվել Մելիքյանի 2025 թվականի հոկտեմբերի 14-ի դիմումը.

*որոշում եմ՝*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2024 թվականի օգոստոսի 27-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ կառավարման մարմինների՝ խորհուրդների անվանական կազմերը հաստատելու մասին N ՄՈ/412-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) որոշմամբ հաստատված N 14 հավելվածի 1-ին կետում «Մելիքյան Մանվել» բառերը փոխարինել «Ալավերդյան Նաիրա» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Недействительная подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

*ՄԱՐԶՊԵՏ* Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 *Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

«20» հոկտեմբերի 2025թ. N ՄՈ/901-Ա

ք. Արմավիր

**«ԱՐՏԱՄԵՏԻ ԳՈՒՐԳԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՄԵԼՔՈՆ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Մելքոն Ղազարյանի 2025 թվականի հոկտեմբերի 20-ի դիմումը.

**ո ր ո շ ու մ ե մ՝**

1. «Արտամետի Գուրգեն Մարգարյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մելքոն Ղազարյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդի մասը 2025 թվականի հոկտեմբերի 27-ից 31-ը ներառյալ՝ 5 աշխատանքային օր տևողությամբ:
2. Մելքոն Ղազարյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Արտամետի Գուրգեն Մարգարյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Արտամետի Գուրգեն Մարգարյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Մարինե Սարգսյանին:
3. «Արտամետի Գուրգեն Մարգարյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Մարինե Սարգսյանի աշխատավարձի վճարումը 2025 թվականի հոկտեմբերի 27-ից 31-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Մելքոն Ղազարյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի նոյեմբերի 3-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Недействительная подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի   Մ Ա Ր Զ Պ Ե Տ**

# ՈՐՈՇՈՒՄ

«20» նոյեմբերի 2025թ.  N ՄՊ/ 902-Ա

**ք. Արմավիր**

***«ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՖՈՒՏԲՈԼԻ ԹԻՄԻՆ ՌՈՄԱՆ ԲԵՐԵԶՈՎՍԿՈՒ ԱՆՎԱՆ ՖՈՒՏԲՈԼԻ ԳԱՎԱԹԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1-ԻՆ ՏԵՂԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Սարդարապատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆուտբոլի թիմին Ռոման Բերեզովսկու անվան ֆուտբոլի գավաթի առաջնությունում 1-ին տեղը զբաղեցնելու համար Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի շնորհակալագրով պարգևատրելու համար.

***որոշում եմ՝***

1. «Սարդարապատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆուտբոլի թիմին պարգևատրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի շնորհակալագրով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՄԱՐԶՊԵՏ՝** Недействительная подпись **Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

«20» նոյեմբերի 2025թ. N՛ՄՊ/ 903 -Ա

**ք. Արմավիր**

***«ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՖՈՒՏԲՈԼԻ ԹԻՄԻ ՄԱՐԶԻՉ ՎԱՐԴԱՆ ՊԱՊԵՅԱՆԻՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՍՊՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ՆԵՐԴՐԱԾ ՄԵԾ ԱՎԱՆԴԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 2025 թվականին Արմավիրի մարզի սպորտի զարգացման գործում ներդրած մեծ ավանդի համար.

***որոշում եմ՝***

1. Վարդան Պապեյանին պարգևատրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի շնորհակալագրով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՄԱՐԶՊԵՏ՝** Недействительная подпись **Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ**

# ՈՐՈՇՈՒՄ

«20» նոյեմբերի 2025թ. N ՄՊ/ 904 -Ա

ք. Արմավիր

### *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԱՆԴՐԱՆԻԿ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՍՊՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ՆԵՐԴՐԱԾ ՄԵԾ ԱՎԱՆԴԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 2025 թվականին Արմավիրի մարզի սպորտի զարգացման գործում ներդրած մեծ ավանդի համար.

***որոշում եմ՝***

1. Անդրանիկ Ղահրամանյանին պարգևատրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի շնորհակալագրով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՄԱՐԶՊԵՏ՝** Недействительная подпись **Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

<<21>> նոյեմբերի 2025թ. N ՄՌ/905 - Ա

ք. Արմավիր

### «ԱՐՏԻՄԵՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԺԱՆՆԱ ԴԱԼՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Ժաննա Դալյանի 2025 թվականի հոկտեմբերի 20-ի դիմումը.

**ո ր ո շ ու մ  ե մ՝**

1. «Արտիմետի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ժաննա Դալյանին տրամադրել 2024-2025 թվականների աշխատանքային տարվա ամենամյա հերթական երկարացված արձակուրդի մասը՝ 2025 թվականի հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 13-ը ներառյալ՝ 10 աշխատանքային օր տևողությամբ:
2. Ժաննա Դալյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Արտիմետի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Արտիմետի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Շուշանիկ Խոյլունցին:

3. «Արտիմետի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Շուշանիկ Խոյլունցի աշխատավարձի վճարումը 2025 թվականի հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 13-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Ժաննա Դալյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի նոյեմբերի 14-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Недействительная подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏ՝** Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

<<21>> հոկտեմբերի 2025թ. N ՄՈ/ 906 -Ա

ք. Արմավիր

## «ՔԵՎՈՐՔ ԵՎ ԱՆԻԹԱ ՓԱԿՈՒՄԵԱՆՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ «ՀԻՍՈՒՍԻ ՄԱՆՈՒԿՆԵՐ» ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածով, 161-րդ հոդվածի 2-րդ մասով, 164-րդ հոդվածով և 169-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով «Քեվօրք և Անիթա Փակումեանների հիշատակի «Հիսուսի մանուկներ» առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Գագիկ Հարությունյանի 2025 թվականի հոկտեմբերի 13-ի դիմումը.

**ո ր ո շ ու մ ե մ՝**

1. «Քեվօրք և Անիթա Փակումեանների հիշատակի «Հիսուսի մանուկներ» առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Գագիկ Հարությունյանին տրամադրել 2024-2025 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդի մասը՝ 2025 թվականի հոկտեմբերի 27-31-ը ներառյալ՝ 5 աշխատանքային օր տևողությամբ:
2. Գագիկ Հարությունյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Քեվօրք և Անիթա Փակումեանների հիշատակի «Հիսուսի մանուկներ» առողջության կենտրոն» փակ

բաժնետիրական ընկերության տնօրենի բուժական գծով տեղակալ Արուսյակ Բեգլարյանին:

3. Գագիկ Հարությունյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի նոյեմբերի 3-ից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Недействительная подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179

**ՄԱՐԶՊԵՏ՝ Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի   Մ Ա Ր Զ Պ Ե Տ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21» հոկտեմբերի 2025թ. N ՄՈ/ 907-Ա

ք. Արմավիր

## «ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Մ.ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ N1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2025 թվականի հոկտեմբերի 17-ի N ՄՈ/896-Ա և 2025 թվականի հոկտեմբերի 17-ի N ՄՈ/899-Ա որոշումները, «Վաղարշապատի Մ.Մաշտոցի N1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում փաստաթղթերի և գույքի հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

**որոշում եմ՝**

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի նախագահին (Ն.Ալավերդյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել «Վաղարշապատի Մ.Մաշտոցի N1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Արուսյակ Մակարյանին (համաձայնությամբ):
3. Հանձնաժողովի նախագահին (Ն.Ալավերդյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հինգ աշխատանքային օրվա ընթացքում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը աշխատանքներն իրականացնելու համար ապահովել հերթապահ մեքենայի տրամադրումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Недействительная подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏ՝** Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 **Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2025 թվականի հուլիսի 21-ի
N ՄՈ/ 907 -Ա որոշման

# ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Ն.Ալավերդյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության ավագ մասնագետ

Անդամներ՝

Ս.Ղուկասյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ

Ջ. Եղոյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ

Հանձնող՝

Լ. Պետրոսյան- «Վաղարշապատի Մ.Մաշտոցի N 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության նախկին տնօրեն

Ընդունող՝

Գ.Գյուլբեկյան- «Վաղարշապատի Մ.Մաշտոցի N 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Գ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի Մ Ա Ր Զ Պ Ե Տ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 21 >> հոկտեմբերի 2025թ. N ՄՊ/908 - Ա

ք. Արմավիր

**«ԳՐԻԲՈՅԵԴՈՎԻ Վ. ՌՈՍՏՈՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԻՄՈՆ ԹՈՎՄԱՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով «Գրիբոյեդովի Վ. Ռոստոմյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Սիմոն Թովմասյանի 2025 թվականի հոկտեմբերի 17-ի դիմումը.

**ո ր ո շ ու մ   ե մ՝**

1. «Գրիբոյեդովի Վ. Ռոստոմյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Սիմոն Թովմասյանին տրամադրել 2024-2025 թվականների ամենամյա արձակուրդի չօգտագործած մասը՝ 2025 թվականի հոկտեմբերի 23-ից նոյեմբերի 12-ը ներառյալ՝ 15 աշխատանքային օր տևողությամբ:
2. Սիմոն Թովմասյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Գրիբոյեդովի Վ. Ռոստոմյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունների կատարումը վերապահել «Գրիբոյեդովի Վ. Ռոստոմյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սաթիկ Շահինյանին:
3. Սիմոն Թովմասյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի նոյեմբերի 13-ից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Недействительная подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 21 » նոյեմբերի 2025թ. N ՄՈ/909-Ա

ք. Արմավիր

### «ՋԱՆՖԻԴԱՅԻ Է. ԴԱՇՏՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2025 թվականի հոկտեմբերի 15–ի ՄՈ/895-Ա որոշումը, «Ջանֆիդայի Է. Դաշտոյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում փաստաթղթերի հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

**որոշում եմ՝**

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի նախագահին (Ն. Ալավերդյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել «Ջանֆիդայի Է. Դաշտոյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Թամարա Յոլյանին (համաձայնությամբ):
3. Հանձնաժողովի նախագահին (Ն. Ալավերդյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հինգ աշխատանքային օրվա ընթացքում և

արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը աշխատանքներն իրականացնելու համար ապահովել հերթապահ մեքենայի տրամադրումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Недействительная подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏ՝** Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

**Հավելված**
**Հայաստանի Հանրապետության**
**Արմավիրի մարզպետի**
**տեղակալի պաշտոնակատար,**
**մարզպետին փոխարինողի**

**2025 թվականի** ~~հոկտեմբերի~~ 21 **ի**
**N ՄՈ/909 -Ա որոշման**

# ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

**Հանձնաժողովի նախագահ՝**

Ն.Ալավերդյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության ավագ մասնագետ

**Անդամներ՝**

Ս. Ղուկասյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ

Ջ. Եղոյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ

**Հանձնող՝**

Ս. Պետրոսյան

«Ջանֆիդայի Է. Դաշտոյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության նախկին տնօրենի պարտականությունները կատարող

**Ընդունող՝**

Ի. Աբրահամյան «Ջանֆիդայի Է. Դաշտոյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող

**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ**
**ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝** **ԳՈՌ ԳԱՍՊԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

<< 21 >> << հոկտեմբերի >> 2025թ. N ՄՈ/910-Ա

Ք.Արմավիր

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 6-Ի ՆՄՈ/297 -Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, <<Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի N 2060-Ն որոշման N 9.1 հավելվածը՝ ըստ կրթական ծրագրերով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմին հատկացված գումարները և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հուլիսի 15-ի N 1169-Ն և 2025 թվականի հուլիսի 10-ի N 921-Ն որոշումները՝*

***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2025 թվականի մարտի 6-ի «Գումար հատկացնելու մասին» ՆՄՈ/297-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝
    1) որոշման 1-ին կետում՝ «177976700 (մեկ հարյուր յոթանասունյոթ միլիոն ինը հարյուր յոթանասունվեց հազար յոթ հարյուր)» թվերը և բառերը փոխարինել

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

«138224900 (մեկ հարյուր երեսունութ միլիոն երկու հարյուր քսանչորս հազար ինը հարյուր)» թվերով և բառերով.

1) որոշման 2-րդ կետը լրացնել նոր 1-ին ենթակետով՝

«1)կնքված պայմանագրերում փոփոխություններն իրականացնել համաձայնագրեր կնքելու միջոցով:».

*2)* որոշման 1-ին կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի::

*2" Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:*

Недействительная подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏ՝** Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 **Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի

2025 թվականի հոկտեմբերի 28-ի N 910 Ա-որոշման

«Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի

2025 թվականի մարտի 6-ի N ՄՊ/297- Ա որոշման

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

ԳՈՒՄԱՐԻ ՎԵՐԱԲԱՇԽՄԱՆ

| Հ/Հ | Համայնքի անվանումը | Գումարը / հազ. դրամ/ |
|---|---|---|
| 1 | Վաղարշապատ | 31539,7 |
| 2 | Արաքս | 8019,4 |
| 3 | Խոյ | 8098,9 |
| 4 | Փարաքար | 10968,9 |
| 5 | Արմավիր | 41325,3 |
| 6 | Մեծամոր | 30921,0 |
| 7 | Բաղրամյան | 7351,7 |
| | Ընդամենը | 138224,9 |

»:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

Գ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

<<21>> հոկտեմբերի 2025թ. N ՄՈ/ 911 -Ա

ք. Արմավիր

**«ՏԱՐՈՆԻԿԻ ԳԱՌՆԻԿ ԳԱՌՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐՄԻՆԵ ՂԱՎԱԼՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածով, 223-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 226-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալի 2025 թվականի սեպտեմբերի 26-ի N 02/09.2/31891-2025 գրությունը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 2025 թվականի հոկտեմբերի 15-ի N05/11.2/07484-2025 գրությունը և «Տարոնիկի Գառնիկ Գառնիկյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արմինե Ղավալյանի 2025 թվականի հոկտեմբերի 20-ի N 165 գրությամբ ներկայացված գրավոր բացատրությունը, դպրոցի աշխատաժամանակի տեղեկագրերը ոչ պատշաճ լրացնելու և աշխատակիցների հաճախելիությունը ստուգող մեխանիզմներ չկիրառելու համար.

**ո ր ո շ ու մ ե մ՝**

1. «Տարոնիկի Գառնիկ Գառնիկյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արմինե Ղավալյանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՄԱՐԶՊԵՏ՝** **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Недействительная подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

<<21>> հոկտեմբերի 2025թ. N ՄՌ/ 912 -Ա

ք. Արմավիր

## ԳՈՀԱՐ ԳՅՈՒԼԲԵԿՅԱՆԻՆ «ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Մ. ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ N1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1) առանց լիազորագրի գործում է կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում, տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

2) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

3) կնքում է պայմանագրեր /այդ թվում՝ աշխատանքային/.

4) կատարում է աշխատանքի բաշխում աշխատողների միջև.

5) գործատուի համաձայնությամբ հաստատում է կազմակերպության հիմնարկների, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնադրությունները, նշանակում դրանց ղեկավարներին.

6) օրենքով և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

7) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

5. Տնօրենն իրավունք չունի՝

1) զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից.

2) անձամբ զբաղվելու ձեռնարկատիրական գործունեությամբ.

3) լինելու երրորդ անձանց ներկայացուցիչն այն մարմնի հետ կապված հարաբերություններում, որտեղ ինքը գտնվում է ծառայության մեջ, կամ որն անմիջականորեն ենթակա է իրեն կամ անմիջականորեն վերահսկելի է իր կողմից.

4) ծառայողական պարտականությունների համար այլ անձանցից ստանալու նվերներ, գումարներ կամ ծառայություններ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

6. Տնօրենը պարտավոր է՝

1) խորհրդին ներկայացնել ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացումն ապահովող տարեկան գործողությունների ժամանակացույցը.

2) դպրոցի ուսումնական պլանի հիման վրա կրթության կառավարման տեղեկատվական համակարգում իրականացնել դասաբաշխում, որի հիման վրա ձևավորվել և հաստատել տարիֆիկացիան.

3) կրթության կառավարման տեղեկատվական համակարգում կառավարության որոշմամբ հաստատված մանկավարժական աշխատողների անվանացանկի հիման վրա ձևավորել և հաստատել ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ աշխատողների անվանացանկը.

4) ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ կարիքները տրամադրել համակարգողին՝ պահանջվող ծախսերը գնահատելու, Նախահաշիվ կազմելու և լիազոր մարմնին ներկայացնելու համար.

5) հսկողություն իրականացնել ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի, սովորողների ուսումնական ծանրաբեռնվածության, առաջադիմության և հաստատության ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնների նկատմամբ.

6) խորհրդի հավանությանը ներկայացնել դպրոցական մակարդակում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կազմը.

7) մանկավարժական խորհրդի ներկայացմամբ հաստատել դպրոցի ուսումնական պլանը, ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը և տնօրենի տեղակալի, դասղեկների, առարկայական մեթոդական միավորումների նախագահների ու մանկավարժական աշխատողների հաշվետվությունները.

8) մասնակցել խորհրդի նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով.

9) աջակցել դպրոցի խորհրդակցական մարմինների աշխատանքներին.

10) նախարարության հաստատած՝ ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգի հիման վրա մշակել և խորհրդի հաստատմանը ներկայացնել դպրոցի ուսուցչի թափուր տեղի համար անցկացվելիք մրցույթի կարգը, դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները.

11) համաձայն պաշտոնների անվանացանկի և նկարագրի՝ անցկացնում է ուսուցչի թափուր տեղի համար մրցույթը, մանկավարժական այլ աշխատողների, հոգեբանի, մանկավարժահոգեբանական աշխատողների, դպրոցի էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետի, իր տեղակալների, մասնաճյուղի, կառուցվածքային ստորաբաժանումների (մեթոդական միավորումների) ղեկավարների ընտրությունը: Կնքում և լուծում է աշխատանքային պայմանագրերը, բաշխում աշխատանքը.

12) ղեկավարել մանկավարժական խորհրդի և համակարգում առարկայական մեթոդական միավորումների աշխատանքները.

13) կազմել ուսումնական պարապմունքների դասացուցակը (կամ ապահովել ուսումնական պարապմունքների դասացուցակի կազմումը) և ուսումնադաստիարակչական աշխատանքների վիճակի մասին հաշվետվությունները.

14) խրախուսել և խթանել աշխատողների ստեղծագործական նախաձեռնությունները.

15) աջակցել ուսուցիչներին՝ մասնակցելու հերթական և կամավոր ատեստավորումներին, ինչպես նաև տարակարգ ստանալու նպատակով հայտ ներկայացնելու համար անհրաժեշտ աշխատանքների կատարմանը.

16) խրախուսել մասնակցային կառավարումն ուսումնական հաստատության խորհրդակցական մարմիններում.

17) իրականացնել վերահսկողություն դասավանդման բովանդակության, սովորողների գիտելիքների յուրացման որակի, առաջադիմության, նրանց վարքի, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման, դպրոցի աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

18) ապահովել արտադասարանական խմբակների և ուսումնական լաբորատորիաների, մասնագիտական կողմնորոշման կենտրոնների բնականոն գործունեությունը.

19) ուսումնական պլանին համապատասխան՝ ապահով (նախադպրոցական) հանրակրթական ծրագրերի (հիմնական և լրացուցիչ) իրականացումը, կրթական գործընթացի կազմակերպումը և կրթության որակի և բովանդակության համար կրել պատասխանատվություն.

20) ապահովել լիազորված մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող հանձնարարականների կատարումը.

21) ապահովել դպրոցում բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորումը.

22) ապահովել դպրոցում իր գործառույթներից բխող՝ գործածության ենթակա փաստաթղթերի վարումը և պահպանումը.

23) սահմանված կարգով ձևավորել դպրոցի սովորողների համակազմը, օրենսդրությամբ սահմանված կարգով քայլեր ձեռնարկել նրանց սոցիալական և հոգեբանական պաշտպանվածության ապահովման ուղղությամբ, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթություն և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ ստանալու իրավունքի իրացման ապահովման համար, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սովորողի (ընտանիքի) հայտնաբերման դեպքում երեք աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել տարածքը սպասարկող խնամակալության և հոգաբարձության մարմնին.

24) օրենքով իրեն վերապահված գործառույթների շրջանակներում ներկայացնել դպրոցը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններում և այլ կազմակերպություններում, տալ լիազորագրեր.

25) խորհրդի քննարկմանը ներկայացնել ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվությունը, արտաքին և ներքին գնահատման արդյունքները.

27) առաջարկություն ներկայացնել համակարգողին՝ մանկավարժական աշխատողներին դրամական խրախուսում տրամադրելու համար.

28) համակարգողի կազմած նախահաշվի նախագծի վերաբերյալ ներկայացնում է դիտարկումներ:

7. Գործատուն իրավունք ունի տնօրենից պահանջելու՝

1) կատարել սույն պայմանագրի պահանջները,

2) ներկայացնել հաշվետվություն կազմակերպության ընթացիկ գործունեության մասին:

8. Գործատուն պարտավոր է՝

1) օժանդակել տնօրենին՝ իրականացնելու սույն պայմանագրից բխող իր իրավունքներն ու պարտականությունները.

2) վարձատրել տնօրենին՝ սույն պայմանագրով սահմանված չափով և կարգով.

3) տնօրենի լիազորությունները դադարեցնելիս՝ օրենքով սահմանված կարգով լուծել նաև նրա կողմից կազմակերպությանը կամ պետությանը պատճառված վնասի փոխհատուցման հարցը:

## 3. Տնօրենի վարձատրությունը և աշխատանքի ու հանգստի ժամանակը

9. Տնօրենն ստանում է ամսական աշխատավարձ՝ 298228 (երկու հարյուր իննսունութ հազար երկու հարյուր քսանութ) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

10. Վարձատրության այլ տեսակները (պարգևատրումներ, լրավճարներ) սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

11. Տվյալ ուսումնական տարվա տիպային ուսումնական պլանից ելնելով տնօրենի համար սահմանվում է 5-օրյա կամ 6-օրյա աշխատանքային շաբաթ, համապատասխանաբար երկու (շաբաթ և կիրակի) և մեկ (կիրակի) հանգստյան օրով:

Տնօրենի համար աշխատանքային օրվա տևողությունը սահմանվում է՝

1) 5-օրյա աշխատանքային շաբաթի դեպքում՝ 8 (ութ) աշխատանքային ժամ, որը կարող է մեկ ժամով կրճատվել միայն ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերի նախօրյակին.

2) 6-օրյա աշխատանքային շաբաթի դեպքում՝ երկուշաբթի օրվանից մինչև ուրբաթ օրը ներառյալ 7 (յոթ) աշխատանքային ժամ, իսկ շաբաթ օրը 5 (հինգ) աշխատանքային ժամ:

12. Տնօրենի աշխատաժամանակի սկիզբը և ավարտը սահմանվում է

1) 5-օրյա աշխատանքային շաբաթի դեպքում 9:00 -18:00-ը.

2) 6-օրյա աշխատանքային շաբաթի դեպքում՝ երկուշաբթի օրվանից մինչև ուրբաթ օրը ներառյալ ժամը 9:00 -17:00, իսկ շաբաթ օրը՝ 9:00 -15:00:

Կազմակերպության գործունեության առանձնահատկությունից ելնելով տնօրենի հանգստանալու և սնվելու համար տրամադրվող ընդմիջման սկիզբը և ավարտը սահմանվում է ժամը 14:00 -15:00-ն:

13. Տնօրենը կարող է ներգրավվել արտաժամյա աշխատանքներում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

14. Տնօրենին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրվում է ամենամյա վարձատրվող արձակուրդ: Արձակուրդի տրամադրման կոնկրետ ժամկետները համաձայնեցվում են գործատուի հետ:

## 4. Պայմանագրի լուծման հիմքերը

15. Պայմանագիրը լուծվում է, եթե՝

1) պայմանագրով նախատեսված ժամկետն ավարտվել է.
2) կազմակերպությունը լուծարվել է.
3) տնօրենը ներկայացնում է դիմում պայմանագրի լուծման մասին.
4) լրացել է տնօրենի 65 տարին.
5) իր գրավոր համաձայնությամբ տնօրենն ընտրվել կամ նշանակվել է այլ պաշտոնում կամ անցել է իր պաշտոնի հետ անհամատեղելի այլ աշխատանքի.
6) տնօրենի երկարատև անաշխատունակության հետևանքով (եթե տնօրենը ժամանակավոր անաշխատունակության պատճառով աշխատանքի չի ներկայացել ավելի քան 120 օր անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում՝ ավելի քան 140 օր, եթե օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված չէ, որ որոշակի հիվանդությունների դեպքում աշխատատեղը և պաշտոնը պահպանվում են ավելի երկար ժամանակով).
7) տնօրենն ավելի քան 3 օր անընդմեջ անհարգելի պատճառներով չի ներկայացել աշխատանքի.
8) տնօրենը նշանակվել է օրենքի պահանջների խախտմամբ.
9) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա տնօրենը ճանաչվել է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած.
10) տնօրենն իր գործառույթներն իրականացնելիս պետական կազմակերպությանը կամ պետությանն իր մեղքով հասցրել է վնաս.
11) տնօրենը դատապարտվել է հանցագործության կատարման համար, և նրա դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.

12) տնօրենին օրենքի համաձայն արգելվել է որոշակի պաշտոններ զբաղեցնել կամ նա զրկվել է որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից.
13) տնօրենը նախորդ 3 տարվա ընթացքում եղել է սնանկանալու պատճառով լուծարված և պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար.
14) տնօրենը կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը.
15) օրինական ուժի մեջ է մտել տնօրենի նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը.
16) կազմակերպությունը դատական կարգով ճանաչվել է սնանկ կամ ունի դատական կարգով որոշված և դատարանի կողմից համապատասխան վճիռն ընդունվելուց հետո վեց ամսվա ընթացքում իր մեղքով չկատարված գույքային պարտավորություն.
17) կազմակերպության կողմից վճարման ենթակա հարկերը կամ սոցիալական ապահովագրության հիմնադրամի վճարներն իր մեղքով՝ սահմանված ժամկետից հետո հաշվետու ժամանակաշրջանում չի վճարել.
18) մեկ տարվա ընթացքում օրենսդրության խախտման համար ենթարկվել է կրկնակի կարգապահական պատասխանատվության.
19) սույն պայմանագրով սահմանված ժամկետում ծրագիրը չի ներկայացվել կամ այն չի հաստատվել.
20) տնօրենի նկատմամբ վստահությունը կորցնելու դեպքում.
21) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ հիմքերի դեպքում, ինչպես նաև սահմանված պարտավորությունները կատարվել են ոչ պատշաճ կամ չեն կատարվել:

16. Գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարում են նրա մահվամբ:

## 5. Պայմանագիրն ուժի մեջ մտնելը և գործողության ժամկետը, դրանում փոփոխություններ և լրացումներ կատարելու կարգը

17. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է մինչև **2030 թվականի հոկտեմբերի 22-ը ներառյալ:**

18. <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 13-րդ մասի պահանջի համաձայն՝ Ատեստավորման արդյունքներով պաշտոնին համապատասխանելու մասին եզրակացության դեպքում սույն պայմանագրի ժամկետը երկարաձգվում է հինգ տարի ժամկետով, որից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, տնօրենը խորհուրդ է ներկայացնում ուսումնական հաստատության հաջորդ հինգ տարվա զարգացման իր ծրագիրը և դրա իրականացումն ապահովող տարեկան գործողությունների ժամանակացույցը:

19. Պայմանագրում կատարված փոփոխությունները, լրացումները և հավելվածներն իրավական ուժ ունեն և պայմանագրի անբաժանելի մասն են, եթե դրանք կատարվել են գրավոր և ստորագրվել կողմերի կողմից:

**6. Կողմերի պատասխանատվությունը**

20. Կողմերը պատասխանատվություն են կրում օրենքով, կանոնադրությամբ և պայմանագրով սահմանված իրենց պարտականությունների չկատարման, ոչ պատշաճ կատարման կամ վերազանցման համար պայմանագրով և օրենքով նախատեսված կարգով:

**7. Վեճերի լուծումը**

21. Կողմերի միջև առաջացած վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կարգով:

**8. Այլ դրույթներ**

22. Պայմանագիրը կնքվում է 3 հավասարազոր օրինակից:

Կողմերի հասցեները և ստորագրությունները՝

| | |
|---|---|
| **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ՝** | **«Արմավիրի Հ.10 հիմնական դպրոց» ՊՈԱԿ տնօրեն՝** |
| ____________ | ____________ |
| **ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ** | **ԳԱՅԱՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ** |
| **Հասցեն՝ ք. Արմավիր, Աբովյան 71** | **Հասցեն՝ ք. Արմավիր, 107 թաղ. 98տ.** |
| **«22» հոկտեմբերի 2025թ.** | **«22» հոկտեմբերի 2025թ.** |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<23>> հոկտեմբերի 2025թ. N ՄՈ/924 - Ա

ք. Արմավիր

## «ԴԱՇՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԷԴԳԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով «Դաշտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Էդգար Պետրոսյանի 2025 թվականի հոկտեմբերի 23-ի դիմումը.

ո ր ո շ ու մ ե մ

1. «Դաշտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Էդգար Պետրոսյանին տրամադրել 2025-2026 թվականների ամենամյա երկարացված արձակուրդը՝ 2025 թվականի հոկտեմբերի 24-ից նոյեմբերի 27-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Էդգար Պետրոսյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Դաշտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունների կատարումը վերապահել «Դաշտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող Մարգարիտ Սարգսյանին:
3. Էդգար Պետրոսյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի նոյեմբերի 28-ից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

23.10.2025

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» նոյեմբերի 2025թ. N ՄՈ/925-Ա

ք. Արմավիր

### «ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՎԱՀԱՆ ՌՇՏՈՒՆՈՒ ԱՆՎԱՆ N 11 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2025 թվականի հոկտեմբերի 22–ի ՄՈ/915-Ա և ՄՈ/917-Ա որոշումները, «Վաղարշապատի Վահան Ռշտունու անվան N 11 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում փաստաթղթերի հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

**որոշում եմ՝**

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի նախագահին (Ն.Ալավերդյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել «Վաղարշապատի Վահան Ռշտունու անվան N 11 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Նարինե Նազարյանին (համաձայնությամբ):
3. Հանձնաժողովի նախագահին (Ն.Ալավերդյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հինգ աշխատանքային օրվա ընթացքում և

արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը աշխատանքներն իրականացնելու համար ապահովել հերթապահ մեքենայի տրամադրումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

24.10.2025

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետ

2025 թվականի հունիսի 24-ի
N ՄՈ/925-Ա որոշման

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Ն.Ալավերդյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության ավագ մասնագետ

Անդամներ՝

Ս. Ղուկասյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ

Ջ. Եղոյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ

Հանձնող՝

Ա. Վիրաբյան

«Վաղարշապատի Վահան Ռշտունու անվան N 11 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող

Ընդունող՝

Մ. Սարգսյան «Վաղարշապատի Վահան Ռշտունու անվան N 11 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԳՈՌ ԳԱՍՊԱՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

«27» հոկտեմբերի 2025թ. ՆՄՌ/926-Ա

ք. Արմավիր

### *ՍԻԼՎԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Koreez» 2025 առարկայական մրցակաբաշխությանը 1-ին հորիզոնականը զբաղեցնելու և բարձր արդյունքներ ցուցաբերելու համար, որի արդյունքում Արմավիրի մարզը ճանաչվել է «Տարվա կրթական մարզ»:

*որոշում եմ՝*

1. Սիլվի Սահակյանին պարգևատրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի շնորհակալագրով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

27.10.2025

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

«27» հոկտեմբերի 2025թ. NՄՈ/927-Ա

ք. Արմավիր

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 27-Ի N ՄՈ/412-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Սարդարապատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2025 թվականի հոկտեմբերի 22-ի N 142 գրությունը.

*որոշում եմ՝*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2024 թվականի օգոստոսի 27-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ կառավարման մարմինների՝ խորհուրդների անվանական կազմերը հաստատելու մասին N ՄՈ/412-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 11-րդ կետում «Պողոսյան Խանում» բառերը փոխարինել «Վարդանյան Անի» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

27.10.2025

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

*ՄԱՐԶՊԵՏ՝* Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 *Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ**

# ՈՐՈՇՈՒՄ

«27» հոկտեմբերի 2025թ. N ՄՌ/928-Ա

ք. Արմավիր

## ՎԱՐԴԱՆ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ «ՀԱՅԹԱՂԻ Հ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԵՎ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» ենթակետով, հիմք ընդունելով «Հայթաղի Հ□□ Կարապետյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի և վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունները կատարող Վարդան Ասատրյանի 2025 թվականի հոկտեմբերի 27-ի դիմումը.

**ո ր ո շ ու մ ե մ՝**

1. Վարդան Ասատրյանին ազատել Հայթաղի Հ□□ Կարապետյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի և վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունների կատարումից:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏ՝** Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

<<27>> նոյեմբերի 2025թ. N ՄՊ/ 929 -Ա

ք. Արմավիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի N878-Ն որոշման 1-ին կետով սահմանված հավելվածի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմին վերապահված գործառույթների իրականացման նպատակով.

**ո ր ո շ ու մ ե մ՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմում առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գործառույթներն իրականացնող փորձագետի կողմից իրականացվող աշխատանքային ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

**Հավելված**
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2025 թվականի նոյեմբերի 27-ի
N ՄՊ/929-Ա որոշման

# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԱՐՑԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՓՈՐՁԱԳԵՏԻ

## 1. Փորձագետ ներգրավելու դեպքը և հիմնավորումները

Փորձագետը ներգրավվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության մասնագետի գործառույթներն իրականացնելու նպատակով:
Փորձագետի կողմից իրականացվող գործառույթներն են՝

- Հավաքագրել տեղեկատվություն, Վարչության պետին ներկայացնել ամփոփ հաշվետվություններ.
- Ուսումնասիրել այլ մարմիններից ստացված տեղեկատվությունը.
- Ուսումնասիրել դիմումները, բողոքները, հարցումները և հավաքագրել տեղեկատվություն պատասխան գրությունների պատրաստման աշխատանքների համար.
- առողջության առաջնային պահպանման օղակների տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետներից ստանալ, ամփոփել և Վարչության պետին ներկայացնել հաշվետվություն.
- Մասնակցել Վարչության ծրագրերի կազմման աշխատանքներին.

## 2. Աշխատանքների իրականացման ժամանակահատվածը

Փորձագետը ներգավվում է 6 ամիս ժամկետով:

## 3. Ակնկալվող արդյունքը

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գործառույթների իրականացում:

## 4. Հաշվետվություններ ներկայացնելու ժամկետը

Փորձագետը ներկայացնում է հաշվետվություն աշխատանքների իրականացման ավարտին:

## 5. Աշխատանքների գնահատման չափանիշները

Աշխատանքը գնահատվում է ներկայացված հաշվետվության հիման վրա, որի արդյունքում երևում է, թե տվյալ փորձագետն իր առջև դրված խնդիրների որ մասն է իրականացրել:

Կատարած աշխատանքի արդյունքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց:

## 6. Աշխատանքների գնահատման արդյունքների ամփոփման ժամկետները

Աշխատանքների գնահատման արդյունքները ամփոփվում են հաշվետվության ներկայացումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

**7. Աշխատանքը կատարելու համար փորձագետին ներկայացվող պահանջները**

1. Գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ,
2. Համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,
3. Բարձրագույն կրթություն:

**ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի**
**գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ Գ. Գասպարյան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

<<27>> հոկտեմբերի 2025թ. N ՄՊ/930 -Ա

ք. Արմավիր

**ՄԵՐԻ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ «ՀԱՅԹԱՂԻ Հ Կ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԵՎ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետով և 6-րդ կետի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի 2025 թվականի հոկտեմբերի 27-ի զեկուցագիրը և Մերի Մինասյանի 2025 թվականի հոկտեմբերի 27-ի համաձայնությունը.

**ո ր ո շ ու մ ե մ**

1. «Հայթաղի Հ Կ Կարապետյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի և վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունները կատարող նշանակել Մերի Մինասյանին:
2. Մերի Մինասյանի աշխատավարձի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան՝ 318304 (երեք հարյուր տասնութ հազար երեք հարյուր չորս) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 Վ Խ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

<<28>> հոկտեմբերի 2025թ. N ՄՈ/931-Ա -
Ա

ք. Արմավիր

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ՆՄՈ/924-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով⁇

**ո ր ո շ ու մ  ե մ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2025 թվականի հոկտեմբերի 23-ի «Դաշտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Էդգար Պետրոսյանին արձակուրդ տրամադրելու մասին» ՆՄՈ/924-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

   1) որոշման 2-րդ կետում «Սարգսյանին» բառը փոխարինել «Պողոսյանին» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՄԱՐԶՊԵՏ՝** Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179

**Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

«28» հոկտեմբերի 2025թ. N ՄՊ/ 932 -Ա

ք. Արմավիր

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի NՄՊ/930-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի 2025 թվականի հոկտեմբերի 28-ի զեկուցագիրը՝

**որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2025 թվականի հոկտեմբերի 27-ի «Մերի Մինասյանին «Հայթաղի Հ․ Կարապետյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի և վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունները կատարող նշանակելու մասին» NՄՊ/930-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները. որոշման վերնագրում և 1-ին կետում «պարտականությունները կատարող» բառերը փոխարինել «ժամանակավոր պաշտոնակատար» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» հոկտեմբերի 2025թ. N ՄՊ/934-Ա

ք. Արմավիր

**«ՀԱՅԹԱՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2025 թվականի հոկտեմբերի 27–ի ՄՊ/930-Ա որոշումը, «Հայթաղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում փաստաթղթերի հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

**որոշում եմ՝**

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի նախագահին (Ն.Ալավերդյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել «Հայթաղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Աշխեն Մովսիսյանին (համաձայնությամբ):
3. Հանձնաժողովի նախագահին (Ն.Ալավերդյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հինգ աշխատանքային օրվա ընթացքում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը աշխատանքներն իրականացնելու համար ապահովել հերթապահ մեքենայի տրամադրումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏ՝** Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 **Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետ

2025 թվականի նոյեմբերի 28-ի
N ՄՊ/934 -Ա որոշման

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

**Հանձնաժողովի նախագահ՝**

Ն.Ալավերդյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության ավագ մասնագետ

**Անդամներ՝**

Ս. Ղուկասյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ

Ջ. Եղոյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ

**Հանձնող՝**

Վ. Ասատրյան

«Հայթաղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի և վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունները կատարող

**Ընդունող՝**

Մ.Մինասյան «Հայթաղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի և վարչատնտեսական մասի համակարգողի ժամանակավոր պաշտոնակատար

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ԳՈՌ ԳԱՍՊԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

«29» նոյեմբերի 2025թ. ՆՄՈ/935-Ա

ք. Արմավիր

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 27-Ի N ՄՈ/412-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Բաղրամյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարողի 2025 թվականի հոկտեմբերի 27-ի N 218 գրությունը.

*որոշում եմ՝*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2024 թվականի օգոստոսի 27-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ կառավարման մարմինների՝ խորհուրդների անվանական կազմերը հաստատելու մասին N ՄՈ/412-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) որոշմամբ հաստատված N 20 հավելվածի 5-րդ կետում «Սիմոնյան Մարինե» բառերը փոխարինել «Ստեփանյան Սյուզաննա» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179

*ՄԱՐԶՊԵՏ՝* *Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

«29» հոկտեմբերի 2025թ. N ՄՈ/936-Ա

ք. Արմավիր

### «ՓՇԱՏԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆԵՅԼԻ ՂՈՐՂԱՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Նեյլի Ղորղանյանի 2025 թվականի հոկտեմբերի 28-ի դիմումը.

**ո ր ո շ ու մ  ե մ՝**

1. «Փշատավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նեյլի Ղորղանյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդի մասը՝ 2025 թվականի նոյեմբերի 3-ից 14-ը ներառյալ՝ 10 աշխատանքային օր տևողությամբ:
2. Նեյլի Ղորղանյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Փշատավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Փշատավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Արմինե Դանիելյանին:
3. «Փշատավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Արմինե Դանիելյանի աշխատավարձի վճարումը 2025 թվականի նոյեմբերի 3-ից 14-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Նեյլի Ղորղանյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի նոյեմբերի 17-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՄԱՐԶՊԵՏ՝** Восстановимая подпись **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի   Մ Ա Ր Զ Պ Ե Տ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<30>> հոկտեմբերի 2025թ. N ՄՊ/937-Ա

ք. Արմավիր

### «ՏԱՆՁՈՒՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՆՈՅԵՄԶԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Նոյեմզար Հովհաննիսյանի 2025 թվականի հոկտեմբերի 28-ի դիմումը.

**ո ր ո շ ու մ   ե մ՝**

1. «Տանձուտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող Նոյեմզար Հովհաննիսյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդը՝ 2025 թվականի նոյեմբերի 3-ից դեկտեմբերի 5-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Նոյեմզար Հովհաննիսյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Տանձուտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Տանձուտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգող Հռիփսիկ Ավետիսյանին:
3. «Տանձուտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգող Հռիփսիկ Ավետիսյանի աշխատավարձի վճարումը 2025 թվականի նոյեմբերի 3-ից դեկտեմբերի 5-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Նոյեմզար Հովհաննիսյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի դեկտեմբերի 8-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,**

Восстановимая подпись

X

ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** Подписано: GRIGORYAN ARAM 2509720082 **Ա□ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

<<30>> հոկտեմբերի 2025թ. N ՄՊ/938-Ա

ք. Արմավիր

### «ՄԱՐԳԱՐԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐՈՒՍՅԱԿ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Արուսյակ Մուրադյանի 2025 թվականի հոկտեմբերի 27-ի դիմումը.

**ո ր ո շ ու մ   ե մ՝**

1. «Մարգարայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արուսյակ Մուրադյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդի մասը՝ 2025 թվականի նոյեմբերի 3-ից 14-ը ներառյալ՝ 10 աշխատանքային օր տևողությամբ:
2. Արուսյակ Մուրադյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Մարգարայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Մարգարայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Նաիրա Մարտիրոսյանին:
3. «Մարգարայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Նաիրա Մարտիրոսյանի աշխատավարձի վճարումը 2025 թվականի նոյեմբերի 3-ից 14-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Արուսյակ Մուրադյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի նոյեմբերի 17-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,**

Восстановимая подпись

X

ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** Подписано: GRIGORYAN ARAM 2509720082 **Ա□ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի  Մ Ա Ր Զ Պ Ե Տ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» սեպտեմբերի 2025թ. ՆՄՈ/939-Ա

*ք. Արմավիր*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի ՆՄՈ/189-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով.

**որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2025 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի հաշվեկշռում հաշվառված ծառայողական ավտոմեքենաների նոր ամրացումներ իրականացնելու և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2020 թվականի մարտի 10-ի ՆՄՈ/75-2020 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՆՄՈ/189-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,**

Восстановимая подпись

X

ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARAM 2509720082

**ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ** **ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2025 թվականի հոկտեմբերի 30-ի
ՆՄՈ/939-Ա որոշման

«Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2025 թվականի հունվարի 31-ի
ՆՄՈ/ 189-Ա որոշման

## ՆՈՐ ԱՄՐԱՑՈՒՄՆԵՐ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին՝ 2024 թվականի արտադրության Volvo EX40 BEV 055LL55 պետհամարանիշով ավտոմեքենա (պատասխանատու՝ Ռազմիկ Առաքելյան).
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի հաշվեկշռում գտնվող՝ 2008 թվականի արտադրության NISSAN TIDA 638LL70 պետհամարանիշով հերթապահ ծառայողական ավտոմեքենա (պատասխանատու՝ Սերյոժա Մելքոնյան):

Գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող՝

Восстановимая подпись

X

VERIFIED OCSP 30.10.2025 12:31:30 GMT+4

Подписано: GASPARYAN GOR 1202630200

Գ. Գասպարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

<<30>> հոկտեմբերի 2025թ. N ՄՈ/ 940 -Ա

ք. Արմավիր

## «ԲԵՐՔԱՇԱՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՆԱԻՐԱ ԹՈՎՄԱՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Նաիրա Թովմասյանի 2025 թվականի հոկտեմբերի 29-ի դիմումը.

**ո ր ո շ ու մ  ե մ՝**

1. «Բերքաշատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող Նաիրա Թովմասյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդը՝ 2025 թվականի նոյեմբերի 3-ից դեկտեմբերի 5-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Նաիրա Թովմասյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Բերքաշատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Բերքաշատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության զինղեկ Հրանտ Հովհաննիսյանին:
3. «Բերքաշատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության զինղեկ Հրանտ Հովհաննիսյանի աշխատավարձի վճարումը 2025 թվականի նոյեմբերի 3-ից դեկտեմբերի 5-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Նաիրա Թովմասյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի դեկտեմբերի 8-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,**

Восстановимая подпись

X

ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARAM 2509720082

**ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ** **Ա□ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ**

# ՈՐՈՇՈՒՄ

«30» հոկտեմբերի 2025թ. ՆՄՊ/941-Ա

ք. Արմավիր

**«ԵՐԱՍԽԱՀՈՒՆԻ ՄԱՐՏԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «թ» ենթակետով, 5-րդ մասով, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազի 2025 թվականի հոկտեմբերի 27-ի N12.9/12.9/24385-2025 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն դատարանի 2025 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ ՀԿԴ/0167/01/25 քրեական գործով կայացված դատավճիռը.

**որոշում եմ՝**

1. Դադարեցնել «Երասխահունի Մարտիկ Գևորգյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Կարինե Մանուկյանի լիազորությունները՝ վաղաժամկետ լուծելով նրա հետ 2022 թվականի փետրվարի 21-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,**

Восстановимая подпись

X

ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** Подписано: GRIGORYAN ARAM 2509720082 **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի   Մ Ա Ր Զ Պ Ե Տ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«31» հոկտեմբերի 2025թ.          N ՄՈ/942-Ա

ք. Արմավիր

**ԱԼԻՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ «ԵՐԱՍԽԱՀՈՒՆԻ ՄԱՐՏԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 1-ին մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2025 թվականի հոկտեմբերի 30-ի ՆՄՈ/941-Ա որոշումը.

**ո ր ո շ ու մ   ե մ՝**

1. Ալինա Գրիգորյանին ազատել «Երասխահունի Մարտիկ Գևորգյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումից:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

Վահրամ Խաչատրյան

**ՄԱՐԶՊԵՏ՝**   Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179   **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

---

## ՈՐՈՇՈՒՄ

«31» հոկտեմբերի 2025թ. N ՄՈ/943-Ա

ք. Արմավիր

**ԱԼԻՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ «ԵՐԱՍԽԱՀՈՒՆԻ ՄԱՐՏԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԵՎ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետով և 6-րդ կետի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2025 թվականի հոկտեմբերի 30-ի NՄՈ/941-Ա որոշումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի 2025 թվականի հոկտեմբերի 30-ի զեկուցագիրը.

**ո ր ո շ ու մ ե մ՝**

1. «Երասխահունի Մարտիկ Գևորգյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի և վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունները կատարող նշանակել տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Ալինա Գրիգորյանին:
2. Ալինա Գրիգորյանի աշխատավարձի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան՝ 318304 (երեք հարյուր տասնութ հազար երեք հարյուր չորս) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

Վահրամ Խաչատրյան

Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179

ՄԱՐԶՊԵՏ՝ Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ**

# ՈՐՈՇՈՒՄ

«28» հոկտեմբերի 2025թ. N ՄՊ/933-Ա

ք. Արմավիր

## ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 2.1-ին մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդական Արամ Գրիգորյանի 2025 թվականի հոկտեմբերի 28-ի դիմումը.

ո ր ո շ ու մ ե մ՝

1. Արամ Գրիգորյանին 2025 թվականի հոկտեմբերի 28-ից ազատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդականի պաշտոնից:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՄԱՐԶՊԵՏ՝** **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179